Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Զեկույց
«ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ»



Վանաձոր
2012

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Դիտորդական առաքելության իրականացումը հնարավոր դարձավ Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ:
Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Ներածություն 4

2 Մեթոդաբանություն 4

3 Իրավունքը կարգավորող իրավական նորմեր 5

3.1 Միջազգային նորմեր և փաստաթղթեր 5

3.2 Ներպետական իրավական նորմեր 7

4 Ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի ժամանակագրությունը և վերլուծությունը 9

5 ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործողությունները ազատ տեղաշարժի իրավունքի պաշտպանության ուղղությամբ 16

6 Եզրակացություն 19

7 Առաջարկություններ 20

Հավելված 1 21

Ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի ժամանակագրությունը և նկարագրությունը վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդների կողմից ՀՀ մաքսային օրենսդրությունում փոփոխությունների դեմ կազմակերպված բողոքի ակցիաների ընթացքում 21

Ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի ժամանակագրությունը և վերլուծությունը Հայ ազգային կոնգրեսի կողմից կազմակերպված հանրահավաքների օրերին 25

Հավելված 2 38

Հավելված 3 45

Հավելված 3.1 47

Հավելված 3.2 52

Հավելված 3.3 55

Հավելված 4 62

Հավելված 4.1 72

Հավելված 5 75

Հավելված 6 76

Հավելված 6.1 77

Հավելված 7 81

Հավելված 7.1 83

Զեկույց
«ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

1 Ներածություն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի (այսուհետ՝ ՀՔԱ) Վանաձորի գրասենյակը, կարևորելով քաղաքացիների քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, մասնավորապես՝ ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքը, մշտական ուշադրության կենտրոնում է պահում նաև ազատ տեղաշարժի իրավունքի պաշտպանությունը՝ հաշվի առնելով այն փաստը, որ որպես կանոն ՀՀ իշխանությունների կողմից ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի սահմանափակումը իրականացվում է անձանց ազատ տեղաշարժի սահմանափակմամբ:
Սույն զեկույցում ներկայացված են 2011 թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպության կողմից իրականացված ազատ տեղաշարժի իրավունքի մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև ազատ տեղաշարժի իրավունքի խախտման/սահմանափակման հետ կապված՝ կազմակերպության կողմից իրականացված գործողությունները: Զեկույցում ներկայացված են նաև ՀՀ իշխանության տարբեր մարմիններին հասցեագրված առաջարկություններ՝ ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման վերաբերյալ:
Մշտադիտարկման նպատակն է՝ բացահայտել ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերը և դրանց դրսևորման ձևերը: Մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել սույն իրավունքի խախտման պատճառները և ներկայացնել դրանց լուծման ուղիները:

2 Մեթոդաբանություն

Ազատ տեղաշարժի իրավունքի մշտադիտարկման իրականացման համար կիրառվել են հետևյալ մեթոդները.

- դիտարկում
- ԶԼՄ նյութերի հավաքագրում
- օրենսդրության ուսումնասիրություն:

Դիտարկումներ են անցկացվել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խմբի, Ստեփանավան, Տաշիր և Ալավերդի քաղաքներում կազմակերպության

ներկայացուցչությունների և Սպիտակի Հելսինկյան խմբի կողմից Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Տաշիր և Սպիտակ քաղաքների ավտոկայաններում և Վանաձոր - Երևան մայրուղում:

Կազմակերպության համար տեղեկատվության աղբյուր են հանդիսացել նաև ՁԼՄ-ների հրապարակումները. ընդհանուր թվով հավաքագրվել են շուրջ 59 հրապարակումներ շուրջ 19 անուն տպագիր թերթերից և էլեկտրոնային կայքէջերից:

Օրենսդրական վերլուծության շրջանակներում դիտարկվել են ազատ տեղաշարժը և խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը կարգավորող ազգային և միջազգային իրավական նորմերը: Դիտարկվել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ եվրոպական կոնվենցիան և կոնվենցիայի կից արձանագրությունները, Մարդու իրավունքների կոմիտեի դիտողությունները, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը, «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

3 Իրավունքը կարգավորող իրավական նորմեր

Ստորև ներկայացված են տեղաշարժի ազատությունը և խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը կարգավորող ազգային և միջազգային իրավական նորմերը.

3.1 Միջազգային նորմեր և փաստաթղթեր

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն տեղից տեղ փոխադրվելու …»: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ «1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք …: 2. Յուրաքանչյուր մարդ ունի ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից մեկնելու իրավունք: 3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ այլոց իրավունքների և ազատությունների

պաշտպանության համար, և համատեղելի են սույն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ: …»:
Մարդու իրավունքների կոմիտեն ձևակերպել է նաև առանձին նկատառումներ.
27-րդ ընդհանուր նկատառման համաձայն՝ Ազատ տեղաշարժ (67-րդ նստաշրջան, 1999)՝ այս փաստաթուղթը տրամադրում է խորը մոտեցում ազատ տեղաշարժի, իր հետևանքների և նույնիսկ սահմանափակումների վերաբերյալ: Կոմիտեն հռչակել է, որ ազատ տեղաշարժն անհրաժեշտ է անձի ազատ զարգացման համար, և այդ իրավունքը փոխազդում է Դաշնագրի մեջ ներառված մի շարք այլ իրավունքների հետ:
(http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/(Symbol)/6c76e1b8ee1710e380256824005a10a9)
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն՝«Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք … 2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով»: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն՝ «Որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք:
Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, ներառյալ իր սեփական երկիրը, հեռանալու իրավունք: Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: 1-ին կետում շարադրված իրավունքները ևս կարող են որոշ ոլորտներում ենթարկվել սահմանափակումների, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և արդարացվում են ժողովրդավարական հասարակության հասարակական շահերով»:

3.2 Ներպետական իրավական նորմեր

ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք»: ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝«Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, որոնց մեջ մտնում է նաև հավաքներ անցկացնելու իրավունքը, կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ «…եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներն ու ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում»: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 163-րդը սահմանում է հավաքներ անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելու կարգը.

1. «Օրինական հավաքներ անցկացնելուն խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Օրինական հավաքներին մասնակցելուն բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով հարկադրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

(163-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, խմբ. 14.04.11 ՀՕ-76-Ն)

Հայաստանի Հանրապետությունում ժողովների, հանրահավաքների, երթերի և ցույցերի անցկացումը կարգավորվում է «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքով, որի 9-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային միջոցառումների անցկացումը լիազոր մարմնի կողմից կարող է արգելվել այն դեպքում, եթե առկա են հավաստի տվյալներ, որ միջոցառման անցկացումն ստեղծում է բռնության

անմիջական սպառնալիք կամ իրական վտանգ է սպառնում պետական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարոյականությանը, անձանց կյանքին և առողջությանը, այլոց սահմանադրական իրավունքներին ու ազատություններին կամ անցկացվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ռասայական, ազգային, կրոնական ատելություն բորբոքելու, բռնության, պատերազմ քարոզելու նպատակով կամ կարող է հանգեցնել զանգվածային անկարգությունների կամ էական գույքային վնաս հասցնել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Այդ տվյալները կարող են համարվել հավաստի, եթե դրանց առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացրել է պաշտոնական հիմնավորված եզրակացություն: Նույն կարգով այդ մարմինները եզրակացություն են տալիս այդ հիմքերի վերացման մասին:

- Նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային միջոցառումն ապօրինի խոչընդոտելու, միջոցառմանը միջամտելու կամ միջոցառումը դադարեցնելու համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:
- «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Ոստիկանության կողմից իրավունքների ու ազատությունների սահմանափակումները հնարավոր են միայն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում: Ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը»:

Այսպիսով, ազատ տեղաշարժի և խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը կարգավորող ազգային և միջազգային իրավական նորմերից կարելի է եզրակացնել.

1. ազատ տեղաշարժի և խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքների սահմանափակումները կարող են սահմանափակվել միայն օրենքով,
2. այդ իրավունքների սահմանափակումները պետք է բխեն ժողովրդավարական հասարակության անհրաժեշտություններից և ունենան հետևյալ նպատակները՝

ա) պետական անվտանգության ապահովում,

բ) հասարակության ապահովություն,

գ) հասարակական կարգի պահպանում,

դ) հանցագործությունների կանխում,

ե) առողջության պաշտպանություն,

զ) բարոյականության պաշտպանություն,

է) այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանություն:
Այսինքն՝ ազատ տեղաշարժի և խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքների սահմանափակումները պետք է բխեն ժողովրդավարական հասարակության շահերից:

4 Ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի ժամանակագրությունը և վերլուծությունը

2011 թ. փետրվար - դեկտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպության կողմից իրականացված մշտադիտարկման և հավաքագրված տեղեկատվության հիման վրա արձանագրվել են ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման 79 դեպք՝ Հայաստանի Հանրապետության 8 մարզերի[1] 30 բնակավայրերում[2]:
Ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի ժամանակագրությունը և նկարագրությունը ներկայացված է հավելված 1-ում, ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման դեպքերի թիվն ըստ ամիսների ներկայացված է աղյուսակ 1-ում, գրաֆիկ 1-ում, իսկ խախտման աշխարհագրությունը ըստ մարզերի և քաղաքների՝ աղյուսակ 2-ում:
Ազատ տեղաշարժի իրավունքի խախտման/սահմանափակման դեպքերի քանակը ըստ ամիսների

Աղուսյակ 1

Ամիս	Խախտումների քանակը
Փետրվար	4
Մարտ	5
Ապրիլ	10
Սեպտեմբեր	2
Հոկտեմբեր	48
Նոյեմբեր	10
Ընդամենը	79

Գծապատկեր 1



Խախտումները դրսևորվել են ոստիկանության և ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների կողմից.

[1] **Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Տավուշ,**
[2] Ալագյազ, Աշտարակ, Ապարան, Ուջան, Այնթափ, Արտաշատ, Մասիս, Մարմարաշեն, Նոր Խարբերդ, Էջմիածին, Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Վանաձոր, Տաշիր, Աբովյան, Եղվարդ, Նաիրիի շրջան, Չարենցավան, Վանատուր, Քասախ, Արթիկ, Արմավիր, Գյումրի, Ձորակապ, Մարալիկ, Իջևան, Նոյեմբերյան

1. Ոստիկանության կողմից

- մարզերից Երևան տանող մայրուղիների վրա իրականացվել է ուժեղացված, մշտական հսկողություն,
- մարզերից Երևան մեկնող երթուղային տաքսիները կանգնեցվել են ոստիկանության աշխատակիցներևի կողմից և առանց իրավական հիմքերի ոստիկանության աշխատակիցները ստուգել են քաղաքացիների փաստաթղթերը
- արգելվել է երթուղային տաքսիների և տաքսիների երթը Երևան, երթուղային տաքսիները ճանապարհի կեսից հետ են ուղարկվել, իսկ տաքսիների վարորդներից հավաքվել են վարորդական իրավունքները

2. Մարզերից Երևան ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների կողմից

15 փետրվարի, 2011 թ.
Վանաձոր քաղաքի մուտքի մոտ

- մասնակի կամ ամբողջական դադարեցվել են ուղևորափոխադրումները մարզերից Երևան,
- երթուղային տաքսիների գծերի տերերի կողմից որոշ մարզերում ոստիկանների ներկայությամբ վարորդներից հավաքվել են վարորդական իրավունքները և հրահանգավորվել է չաշխատել

Այսպիսով, 2011 թ. ազատ տեղաշարժի իրավունքի խախտումները իրականացվել են ոստիկանության ուղղակի մասնակցությամբ կամ անուղղակի միջամտությամբ: Հարկ է նշել, որ ազատ տեղաշարժի իրավունքի խախտումներ արձանագրվել են հիմնակ-անում ՀԱԿ-ի հանրահավաքի օրերին: Ոստիկանության կողմից հատկապես խիստ վերահսկողություն է իրականացվել ՀԱԿ-ի 2011 թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատ-վածում կազմակերպված հանրահավաք-շուրջօրյա նստացույցի օրերին:

17 փետրվարի, 2011 թ.
Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկից մոտ 15 մետր հեռավորության վրա

2011թ.-ին ազատ տեղաշարժի իրավունքի խախտման աշխարհագրությունը ըստ մարզերի և քաղաքների

Աղյուսակ 2

Մարզ/քաղաք	17.03.11	02.10.11	03.10.11	05.10.11	06.10.11	07.10.11	25.11.11	Ընդամենը
Արագածոտն	2	1	1	1	1	2	1	9
Ալագյազ		1		1				2
Աշտարակ	1				1	1	1	4
Աշտարակ			1					1
Ապարան	1							1
Ուջան						1		1

Գծապատկեր 2



Աղյուսակ 3

Մարզ/քաղաք	17.03.11	28.04.11	28.10.11	Ընդամենը
Արարատ	1	2	4	7
Այնթափ			1	1
Արտաշատ		1	1	2
Մասիս	1	1		2
Մարմարաշեն			1	1
Նոր Խարբերդ			1	1

Գծապատկեր 3



Աղյուսակ 4

Մարզ/քաղաք	06.10.11	07.10.11	25.11.11	Ընդամենը
Կոտայք	1	6	2	9
Աբովյան		1	1	2
Եղվարդ		1	1	2
Նաիրիի շրջան		1		1
Չարենցավան	1	1		2
Վանատուր		1		1
Քասախ		1		1

Գծապատկեր 4



Աղյուսակ 5

Մարզ/քաղաք	15.02.11	17.02.11	17.03.11	28.04.11	30.09.11	01.10.11	07.10.11	25.11.11	Ընդամենը
Շիրակ	1	1	1	2	1	1	4	1	12
Արթիկ				1					1
Արմավիր							1		1
Գյումրի	1	1	1	1	1	1	1	1	8
Ձորակապ							1		1
Մարալիկ							1		1

Գծապատկեր 5



Աղյուսակ 6

Մարզ/քաղաք	15.02.11	17.02.11	17.03.11	08.04.11	28.04.11	30.09.11	01.10.11	04.10.11	05.10.11	06.10.11	07.10.11	08.10.11	28.10.11	25.11.11	Ընդամենը
Լոռի	1	1	1	1	5	1	5	5	5	3	1		3	4	36
Ալավերդի					1		1	1	1				1	1	6
Սպիտակ					1		1	1	1	1				1	6
Ստեփանավան					1		1	1	1	1			1	1	7
Վանաձոր	1	1	1	1	1	1	1	1	1	1	1				11
Տաշիր					1		1	1	1				1	1	6

Գծապատկեր 6



Աղյուսակ 7

Մարզ/քաղաք	06.10.11	07.10.11	08.10.11	25.11.11	Ընդամենը
Արմավիր				1	1
Էջմիածին				1	1
Գեղարքունիք		1		1	2
Սևան		1		1	2
Տավուշ	1	1	1		3
Իջևան			1		1
Նոյեմբերյան	1	1			2

Գծապատկեր 7



Մարզերը մայրաքաղաքի հետ կապող ճանապարհները հանրահավաքների և նստացույցի օրերին փակ լինելու մասին վկայում են նաև ԶԼՄ-ներից հավաքագրված հրապարակումները:

1-ը մարտի, 2011 թ.
Ավտոկայան, ք. Վանաձոր

Համաձայն ԶԼՄ հրապարակումների վերոհիշյալ օրերին ամբողջապես կամ մասամբ փակված են եղել Նոյեմբերյան, Գյումրի, Արմավիր, Աշտարակ, Վանաձոր, Չարենցավան, Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի, Սպիտակ, Մարալիկ, Ապարան, Չարենցավան, Աբովյան, Քասախ, Ուջան, Վանատուր, Զորակապ, Իջևան և այլ քաղաքներից և գյուղերից Երևան տանող ճանապարհները:

2011 թ սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում տրանսպորտային ծառայությունների ոչ պատշաճ աշխատանքի պատճառով քաղաքացիները խնդիրներ են ունեցել նաև Երևանից մարզեր վերադառնալիս:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը 2011 թ. հոկտեմբերի 6-ին լրագրողների հետ ճեպազրույցում հերքել էր, այն տեղեկությունը, որ ընդդիմության շուրջօրյա ակցիայի մեկնարկից հետո սահմանափակվել է մարզերից մայրաքաղաք եկող երթուղային տաքսիների երթևեկությունը: «Մի տեղ ոստիկանները կանգնած են, մայրուղու վրա ծառայություն են կատարում: Միգուցե շահարկվո՞ւմ է, որ տեսնում են Երևանում միտինգ է ընթանում, ասում են՝ դրա համար են կանգնած: Ես հիմա հատուկ ծառայություններ եմ դրել, մարդիկ պոստերում նստած ծառայություն են կատարում, բայց մեքենան որ կանգնեցնեն, ուղևորներին իջեցնեն կամ հորդորեն, որ չի կարելի քաղաք գնալ, միտինգներին մասնակցել, այսպիսի փաստ ես չունեմ այս պահին: Եվ այդպիսի ցուցում իմ կողմից որևէ մեկին չի տրվել», - ասել է ոստիկանապետը (տես՝ http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20111007_3&flag=am):

28 ապրիլի, 2011 թ.
Ավտոկայան, ք. Վանաձոր

Մինչդեռ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀԱԿ-ի կողմից սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպված հանրահավաք շուրջօրյա նստացույցի օրերին իրականացված մոնիթորինգի արդյունքում արձանագրել է, որ Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Սպիտակ քաղաքներից Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները 2011 թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 5-ը մասնակի, իսկ հոկտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 8-ը ընդհանրապես դադարեցրել են ուղևորափոխադրումները:

Այսպիսով, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները վկայում են այն մասին, որ տարվա կտրվածքով ՀՀ տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքը ՀՀ իշխանությունների կողմից խախտվել է 16 օրերի ընթացքում, որոնցից.

- 2 օր՝ փետրվարի 15-ին և 17-ին, վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդների կողմից կազմակերպված բողոքի ակցիաների օրերին
- 14 օր՝ մարտի 17-ին, ապրիլի 8-ին, ապրիլի 28-ին, սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 8-ը, հոկտեմբերի 28-ին և նոյեմբերի 25-ին, ՀԱԿ-ի հանրահավաքների անցկացման օրերին:

- ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից արձանագրվել է ազատ տեղաշարժի իրավունքի խախտման/սահմանափակման 79 դեպք, որոնցից 4 դեպք վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդների կողմից կազմակերպված բողոքի ակցիաների օրերին, 75 դեպք՝ ՀԱԿ-ի հանրահավաքների անցկացման օրերին:

2011 թ. ընթացքում ՀԱԿ-ի կողմից կազմակերպվել են 21 հանրահավաք, որոնցից 14-ի

Հոկտեմբերի 5, 2011 թ.
Արթիկ

Ապրիլի 28, 2011 թ.
Ավտոկայան, ք. Վանաձոր

ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Լոռու մարզում ազատ տեղաշարժի իրավունքի խախտման/սահմանափակման դեպքեր է արձանագրել:

5 ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործողությունները ազատ տեղաշարժի իրավունքի պաշտպանության ուղղությամբ

2011 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից, բացի ազատ տեղաշարժի իրավունքի խախտումների արձանագրումից, ձեռնարկվել են նաև համապատասխան գործողություններ՝ խախտումներ թույլ տված ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների և պաշտոնատար անձանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով: Մասնավորապես. ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ Լոռու մարզի դատախազություն են ներկայացվել երեք հաղորդում, երկու հայտարարություն և մեկ դիմում[3]:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից հանցագործության մասին ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված 3 հաղորդումներից 2-ը միացվել են իրար՝ ընթացքը համատեղ լուծելու համար, քրեական գործի քննությունը կատարել է Լոռու մարզի քննչական բաժինը: Երկու դեպքում էլ ներկայացված հաղորդումների հիման վրա կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որոնք բողոքարկվել են ինչպես վերադասության, այնպես էլ դատական կարգով:
Կազմակերպությունը, բողոքարկելով ՀՀ ոստիկանության քննչական մարմնի քրեական գործ չհարուցելու մասին որոշումը, վիճարկում էր այն հանգամանքը, որ ներկայացված հաղորդումների վերաբերյալ չի իրականացվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Ներպետական դատական ատյաններում կազմակերպությունը դրական արդյունքի չի հասել: Ներկայումս ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի վերաբերյալ դիմում է պատրաստվում Մարդու իրավունքների Եվրոպական դատարան ներկայացնելու համար:

2011 թ. ապրիլի 28-ին (առավոտյան ժամը 08:00-12:30-ի սահմաններում), սեպտեմբերի 30-ին (ժամը 09:30-11:00-ի սահմաններում) և հոկտեմբերի 1-ին (առավոտյան ժամը 10:00-13:00-ի սահմաններում) ՀԱԿ-ի հերթական հանրահավաքի օրերին Լոռու մարզի ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների կողմից Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և Տաշիր քաղաքներից ուղևորափոխադրումները դադարեցվել են կամ իրականացվել են սահմանված գրաֆիկների խախտումներով: Խախտումների վերաբերյալ կազմակերպության կողմից ապրիլի 28-ին և հոկտեմբերի 1-ին հայտարարություններ են ներկայացվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն և ՀՀ Լոռու մարզի մարզպետարան՝ Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի,

[3] Տ'ես ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված հաղորդումը, հայտարարությունները և դիմումը պատասխաններով հավելված 3-ում

Տաշիր, Ստեփանավան քաղաքներից Երևան ուղևորափոխադրումներ չիրականացնելու վերաբերյալ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից պահանջ է ներկայացվել նշված քաղաքներից դեպի Երևան երթուղին սպասարկող կազմակերպությունների լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ, քանի որ ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունները, ստանալով լիցենզիա, պարտավորվում են ուղևորափոխադրումներ իրականացնել նախապես հաստատված գրաֆիկով և ծավալներով:

2011 թ. ապրիլի 28-ի հայտարարության վերաբերյալ Լոռու մարզպետարանի և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ցուցաբերվել է անգործություն և մինչև մայիսի 31-ը հայտարարության կապակցությամբ որևէ միջոցառում չի ձեռնարկվել: Ավելին, 2011 թ. մայիսի 31-ին՝ առավոտյան ժամը 08:00-12:50-ի սահմաններում, Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումները դադարեցվել են, Վանաձոր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպությունը դրսևորել է նույնատիպ խախտում, որը հանգեցրել է ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի խախտմանը:
2011թ. ապրիլի 28-ին ուղարկված հայտարարության վերաբերյալ կազմակերպությունը չստանալով պատասխաններ մայիսի 31-ին վարչական բողոք է ուղարկել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և Լոռու մարզպետի անգործությունը վերացնելու և պարտավորեցնելու 2011 թ. ապրիլի 28-ին կազմակերպության ներկայացրած հայտարարության վերաբերյալ համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Վարչապետին ուղղված վարչական բողոքը ՀՀ վարչապետի 2011 թ. հունիսի 8-ի հանձնարարականով վերահասցեագրվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը: Նախարարության կողմից 2011 թ. հունիսի 22-ին ստացվել է պատասխան այն մասին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի վարչական բողոքում նշված փաստարկները ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության անգործության վերաբերյալ անհիմն են, իսկ հայտարարության մեջ նշված պահանջի՝ նշված երթուղիներին սպասարկման իրավունքից զրկելու վերաբերյալ, իրավական հիմքերը բացակայում են՝ իրավախախտումը նույն օրը վերացվելու պատճառով[4]:

Հոկտեմբերի 1-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից հայտարարություն է ուղարկվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մանուկ Վարդանյանին և Լոռու մարզի մարզպետ Արթուր Նալբանդյանին, Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր,

[4] Տ'ես հավելված 4-ում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացված հայտարարությունը Լոռու մարզպետ Արամ Քոչարյանին, վարչական բողոքը ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին, և հայտարարության և բողոքի վերաբերյալ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից և ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնից ստացված պատասխանները

Ալավերդի քաղաքներից մայրաքաղաք ուղևորափոխադրումները կանոնավոր կերպով կազմակերպելու համար պատասխանատու անձանց կողմից ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքը խախտելու և խախտումները կանխարգելելու ուղղությամբ անգործություն դրսևորելու վերաբերյալ:

2011 թ. հոկտեմբերի մեկին կազմակերպության հայտարարության կապակցությամբ հոկտեմբերի 11-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է պատասխան այն մասին, որ նշված քաղաքներից Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները նախազգուշացվել են «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան ուղևորափոխադրումներ իրականացնելու համար: Համաձայն նույն օրենքի 12-րդ հոդվածի՝ նախազգուշացումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, խախտումը չվերացնելու, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կզրկվի երթուղու սպասարկման իրավունքից[5]:

2011 թ. հոկտեմբերի 10-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն պարզելու համար՝

- ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող քանի կազմակերպություն է գործում ՀՀ-ում /ըստ մարզերի/,
- 2011 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 9-ը դրանցից որոնք են ենթարկվել վարչական պատասխանատվության,
- որ նորմի խախտման հիմքով և ինչ չափի:

2011 թ. հոկտեմբերի 24-ին Տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է գրություն, որով ներկայացվել է ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ցանկը և տեղեկատվություն այն մասին, որ 2011 թ. սեպտեմերի 30-ից մինչև հոկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում 11 ընկերությունների նկատմամբ կազմվել է 14 վերահսկողական արդյունքների ամփոփման արդյունքների արձանագրություն՝ հիմնականում երթուղու ձախողման պատճառով կազմակերպությունները պատասխանատվության են ենթարկվել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով (5000 ՀՀ դրամ)[6]:

[5] Տ՛ես հավելված 5-ում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հայտարարության առնչությամբ պատասխանը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից

[6]Տ՛ես հավելված 6-ում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ուղարկված տեղեկատվության հարցումը և հարցման պատասխանը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից

Հոկտեմբերին նախազգուշացում ստացած ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների կողմից նոյեմբերի 25-ին հերթական անգամ չեն իրականացվել ուղևորափոխադրումներ դեպի Երևան: 2011 թ. նոյեմբերի 28-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից դիմում է ուղարկվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր և Ստեփանավան քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին երթուղու սպասարկման իրավունքից զրկելու պահանջով՝ նախազգուշացումից հետո խախտումը չվերացնելու և մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու հիմքով:

2011 թ. դեկտեմբերի 29-ին Տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է պատասխան այն մասին, որ ՀՀ տրանսպորտի տեսչության Լոռու մարզի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից վերահսկողության գործառույթների իրականացման արդյունքում պարզվել է, որ 2011 թ. նոյեմբերի 25-ին Ստեփանավան, Սպիտակ և Ալավերդի քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումները ժամը 14:00-ից հետո ուղևորահոսքի ծանրաբեռնվածության պատճառով սպասարկվել են չվացուցակի որոշակի խախտումներով՝ օգտագործելով չվացուցակով մինչև ժամը 14:00-ն գրեթե բոլոր չվերթերի համար նախատեսված բոլոր տրանսպորտային միջոցները: Հետևաբար, ըստ գրության՝ կազմակերպության կողմից ներկայացված «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելի չեն[7]:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացված հայտարարություններում բարձրացված դեպքերի հետ կապված ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից վարչական պատասխանատվության են ենթարկվել մի շարք ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններ, այնուամենայնիվ ազատ տեղաշարժի իրավունքի խախտումները չեն վերացվել:

6 Եզրակացություն

Ազատ տեղաշարժի մշտադիտարկման արդյունքում կարելի է եզրակացնել.

1. 2011 թ. ընթացքում ՀՀ իշխանությունների կողմից պարբերաբար խախտվել/սահմանափակվել է ազատ տեղաշարժի իրավունքը, որը մասնավորապես դրսևորվել է ոստիկանների ուղղակի միջամտության կամ անգործության միջոցով
2. Իրավապահ մարմինների կողմից ազատ տեղաշարժի իրավունքի խախտման/սահմանափակման դեպքերի կապակցությամբ պատշաճ քննություն չի իրականացվել

[7] Տե՛ս հավելված 7 –ում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից Տրանսպորտի և կապի նախարարություն ուղարկված և նախարարության պատասխան գրությունները

3. ՀՀ դատական ատյանները չեն դրսևորել անկախ, արդար և անաչառ վերաբերմունք ազատ տեղաշարժի խախտման/սահմանափակման դեպքերի քննության ժամանակ արդարադատություն իրականացնելիս:
4. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ձեռնարկվել են միջոցառումներ ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների կողմից կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնելու ուղղությամբ, սակայն դրանք դեռևս բավարար չեն քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման համար:

7 Առաջարկություններ

1. ՀՀ ոստիկանությանը

- Քաղաքացիների ազատ տեղաշարժի խախտման յուրաքանչյուր ահազանգի վերաբերյալ իրականացնել պատշաճ, օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննություն պատասխանատու անձանց գործողությունները կամ անգործությունը բացահայտելու նպատակով
- Քննության արդյունքները հրապարակայնացնել և ծանոթացնել հանրությանը
- Ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումը իրականացնել միայն օրենքի հիման վրա և երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով

2. ՀՀ արդարադատության խորհրդին և ՀՀ դատարանների նախագահների խորհրդին

- Քննության առնել ազատ տեղաշարժի իրավունքի խախտման վերաբերյալ դատական գործեր իրականացրած դատավորների կողմից դատավարական նորմերի խախտման դեպքերը և ուսումնասիրության արդյունքները ներկայացնել հանրությանը

3. ՀՀ գլխավոր դատախազությանը

- Իրականացնել պատշաճ հսկողություն հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ կապված ազատ տեղաշաժի իրավունքի խախտման/սահմանափակման դեպքերի քննության հետ:

4. ՀՀ հատուկ քննչական ծառայությանը

- Լրատվական միջոցներով ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի վերաբերյալ տարածված տեղեկությունների հիման վրա իրականացնել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ոստիկանության աշխատակիցների կողմից պաշտոնական լիազորությունների չարաշահման առնչությամբ և քննության արդյունքները ներկայացնել հանրությանը:

Հավելված 1

Ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի ժամանակագրությունը և նկարագրությունը վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդների կողմից ՀՀ մաքսային օրենսդրությունում փոփոխությունների դեմ կազմակերպված բողոքի ակցիաների ընթացքում

ք. Գյումրի, ք. Վանաձոր, փետրվարի 15
Խախտման նկարագրությունը
➢ Շուրջ 7 ժամ դադարեցվել է մոտ հիսուն մեքենաների շարժը միակողմանիորեն Գյումրիից Վանաձոր Վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդների կողմից Վանաձորում 2010 թ. դեկտեմբերի 22-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ մաքսային օրենսգրքում ընդունված փոփոխությունների դեմ կազմակերպված բողոքի ակցիային Գյումրի քաղաքից վարորդների մասնակցությանը խոչընդոտելու նպատակով Ջաջուռ գյուղի մոտ ճանապարհը փակվել է Ախուրյանի ոստիկանության աշխատակիցների կողմից ժամը 10:00-ից մինչև 16:30-ը: 16:30-ի սահմաններում ոստիկանության աշխատակիցները առանց որևէ բացատրության հեռացել են մայրուղուց, թույլ տալով վարորդներին շարունակել երթևեկությունը: Ճանապարհը, որը Վրաստան տանող միջպետական ճանապարհ է, ոստիկանության աշխատակիցների կողմից փակվել է այն պատճառաբանությամբ, որ հետագա ճանապարհը և հատկապես Ջաջուռի լեռնանցքն անանցանելի է մոլեգնող ձնաբքի պատճառով: Սակայն մինչ բողոքի ակցիային մասնակցել ցանկացող վարորդները կանգնած են եղել ճանապարհին, հայկական պետհամարանիշներով ավտոմեքենաներն անարգել երթևեկել են Գյումրի-Վանաձոր ճանապարհով: Կազմակերպության արագ արձագանքման խումբն արձանագրել է, որ դադարեցվել է շուրջ հիսուն մեքենաների միակողմանի շարժը Գյումրիից Վանաձոր: Ախուրյանի ոստիկանության բաժնի պետի տեղակալը հայտնել է հավաքվածներին, որ իրենք ունեն համապատասխան հրաման՝ փակել ճանապարհը և թույլ չտալ վրացական պետհամարանիշներ ունեցող մեքենաներին ուղևորվել Գյումրիից Վանաձոր ակցիային մասնակցելու նպատակով: ➢ Ժամը 17:00-ի սահմաններում, երբ մոտ 50 մեքենայից կազմված ավտոշարասյունը մոտեցել է Վանաձոր քաղաքին, ոստիկանության աշխատակիցների կողմից ճանապարհը կրկին փակվել է Վանաձոր-Երևան ճանապարհի Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ Վանաձոր - Ստեփանավան խաչմերուկից դեպի Երևան մոտ 1 կմ հեռավորության վրա: Երթևեկությունը դադարեցվել է 1 ժամով:

Նկատենք, որ ճանապարհին՝ մինչև Վանաձոր քաղաքի մուտք, ոստիկանության ոչ մի մեքենա չի հանդիպել: Ճանապարհը ձյան պատճառով որևէ անանցանելիության խնդիր չի առաջացրել, ավելին՝ Վանաձոր քաղաքին ավելի մոտ հատվածը եղել է ձյունից ամբողջությամբ մաքրված:

Ժամը 17:30-ի սահմաններում Վանաձոր քաղաքի մուտքի մոտ հավաքվել են Ճանապարհային ոստիկանության մոտ 20 աշխատակիցներ իրենց մեքենաներով:

Այնուհետև հենց այդ նույն հատվածում Ճանապարհային ոստիկանության մեքենաներին զուգահեռ փողոցի երթևեկելի հատվածի հենց մեջտեղում կանգնել է տրակտոր: Կարճ ժամանակ անց ճանապարհի այդ հատվածը դարձել է անանցանելի: Մոտ 15 րոպե անց Ճանապարհային ոստիկանության աշխատակիցներին միացել են ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Համբարյանը, Ոստիկանության Վանաձորի բաժնի պետ Ս.Հ. Ավետիսյանը, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ սպայական վաշտի հրամանատար Մ.Վ.Կարապետյանը:

Այս դեպքում ևս ոստիկանության աշխատակիցները չեն ներկայացել, չեն ներկայացրել դեպի Վանաձոր ճանապարհը փակելու պատճառները: Աժ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի այն հարցին, թե ինչու է փակվել ճանապարհը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Համբարյանը պատասխանել է, որ տրակտորը մաքրում է ճանապարհը: Միաժամանակ վերջինս հավելել է. «Ասեք ես իմանամ՝ ուր եք գնում, չէ շարասյունով չեք կարող քաղաքով ման գալ, քաղաքում կանգնել չկա, եթե կանգնում եք, ուրեմն մենք տրակտորով կփակենք»: Վերջինս մոտ 5-10 անգամ կրկնել է՝ «Կանգնել չկա»: Մոտ 1 ժամ անց տրակտորը տեղից շարժվել է, և դեպի Վանաձոր ճանապարհը բացվել է:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի Տաշիրի և Ստեփանավանի ներկայացուցչությունների կողմից նույնպես արձանագրվել է, որ խոչընդոտներ են հարուցվել նաև Տաշիրից և Ստեփանավանից Վանաձոր ուղևորված վրացական պետավտոհամարանիշներով շահագործվող մեքենաների համար:

Աղբյուրը

- ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ
- Ժառանգություն կուսակցության կենտրոնական գրասենյակի կողմից տարածած հաղորդագրություն
- http://www.lragir.am/armsrc/country44130.html3
- http://7or.am/am/news/view/17266/
- http://www.lragir.am/armsrc/country44127.html3
- http://www.lragir.am/armsrc/country44155.html3
- http://1in.am/arm/armenia_politics_9889.html
- http://1in.am/arm/armenia_right_9841.html
- http://news.am/arm/news/47995.html

Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էր անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
ք. Վանաձոր, փետրվարի 17
Խախտման նկարագրությունը
Ժամը 08:00-11:30-ի սահմաններում Վանաձոր-Երևան մայրուղու Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկից մոտ 15 մետր հեռավորության վրա, ճանապարհն ամբողջությամբ վերահսկվել է Ոստիկանության կողմից և վրացական պետհամարանիշներով մեքենաներին արգելվել է գնալ Երևան: Ոստիկաններն առանց որևէ բացատրության փակել են շուրջ 10 ավտոմեքենաների ճանապարհը դեպի մայրաքաղաք: Ոստիկանության գործողությունները նպատակ են ունեցել խոչընդոտել Վանաձորի վարորդների մասնակցությանը Երևանում՝ կառավարության շենքի մոտ, Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի՝ վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաներ ունեցող վարորդների կողմից կազմակերպվելիք բողոքի ցույցին, որի նպատակն էր պահանջել ՀՀ իշխանություններից՝ չեղյալ համարել ավտոմեքենաների «ժամանակավոր ներմուծման» ռեժիմով Հայաստան մուտքի սահմանափակումները և բարեփոխել արտասահմանյան համարանիշներով մեքենաների մաքսային արժեքի որոշման պայմանները: Ճանապարհի աջ և ձախ հատվածում կանգնած են եղել «Ճանապարհային ոստկանության» ծառայության երկու ավտոմեքենաներ: Ճանապարհի նույն հատվածում գտնվել են ոստիկանական համազգեստով ավելի քան 10 անձինք, ինչպես նաև ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի պետ Ս. Հ. Ավետիսյանը, ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի պետի տեղակալ Ս. Այվազյանը, ճանապարհային ոստկանության մայոր Մ. Կամենդատյանը, մոտ մեկ ժամ անց նրանց է միացել նաև «Ճանապարհային ոստիկանության» ծառայության պետ Մ. Կարապետյանը: Ոստիկանության աշխատակիցները կանգնեցրել են վրացական պետհամարանիշներով մեքենաները, առանց ներկայանալու, վարորդներից պահանջել փաստաթղթեր, առանց համապատասխան բացատրության հարցրել, թե ուր է գնում վարորդը, և եթե վերջինս պատասխանել է՝ Երևան, արգելել են առաջ շարժվել: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների այն հարցին, թե ինչու են արգելում մեքենաների տեղաշարժը, Մ. Կամենդատյանը, ինչպես նաև Ս. Այվազյանը պատասխանել են, որ Սպիտակից այն կողմ ճանապարհը ձյան պատճառով անանցանելի է, և անվտանգության ապահովման պատճառով արգելում են մեքենաների շարժը Երևան: Հենց այդ նույն պահին ոստիկանության աշխատակիցներից մեկը, ճշտելով, որ բեռնատար մեքենան մեկնում է Երևան, չի

արգելել վերջինիս տեղաշարժը: Այն հարցին, թե ինչու է անվտանգությունը վերաբերում միայն վրացական պետհամարանիշներով մեքենաներին, և ինչու նույն անվտանգության տեսանկյունից չի արգելվում նաև հայկական պետհամարանիշներով մեքենաների տեղաշարժը, նրանք ոչինչ չեն պատասխանել: Այնուհետև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները գնացել են Լոռու մարզի դատախազություն, հանդիպել Լոռու մարզի դատախազի տեղակալ Ս. Առաքելյանին, բանավոր կերպով ներկայացրել Վանաձոր-Երևան ճանապարհին տեղի ունեցող իրադարձությունները: Վերջինս պատասխանել է, որ այն բոլոր քաղաքացիները, որոնք տուժել են տեղաշարժը խոչընդոտելու արդյունքում կարող են իրենց իրավունքների պաշտպանության համար դիմել դատարան՝ պահանջելով նաև վնասի փոխհատուցում: Վանաձոր-Երևան ճանապարհին Ոստիկանության կողմից իրականացվող գործողությունների օրինաչափության, դրանց միջամտելու կամ այդ ուղղությամբ որևէ այլ միջոցառում ձեռնարկելու համար Ս. Առաքելյանը խնդրել է ներկայացնել գրավոր հաղորդում՝ կից համապատասխան ապացույցներով ինչը և արվել է կազմակերպության կողմից:
Աղբյուրը
➢ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տարածած նյութեր, հաղորդումներ ➢ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-02-18/article_3951/The_Right_of_Citizens_to_Freedom_of_Movement_is_Impeded.html ➢ «Ժառանգություն» կուսակցության լրատվական ծառայության տարածած հաղորդագրություն ➢ http://www.lragir.am/armsrc/country44240.html3
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էին անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
ք. Գյումրի, փետրվարի 17
Խախտման նկարագրությունը
Առավոտյան ժամը 7:30-ից փակվել է Գյումրիի Սայաթ-Նովա պողոտան, որի նպատակն է եղել թույլ չտալ գյումրեցի վարորդներին մեկնել Երևան մասնակցելու կառավարության շենքի մոտ կազմակերպված Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի՝ վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաներ ունեցող վարորդների բողոքի ցույցին: Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանի տեղեկացմամբ, ինչպես նաև «Ժառանգություն» կուսակցության լրատվական ծառայության և Հայ ազգային կոնգրեսի կողմից մամուլով արված հայտարարությունները վկայում են այն մասին, որ փետրվարի 17-ին Գյումրիում առավոտյան 7:30-ից մեկ տասնյակից ավելի վարորդներ հավաքվել են Գյումրու

դրամատիկական թատրոնի շենքի դիմաց: Իսկ շուրջ 100 մեքենաներ քաղաքի տարբեր հատվածներում սպասելիս են եղել ակցիայի սկսվելուն, որպեսզի միանան երթին: Ժամը 8:00-ին, երբ ցույցի մասնակիցներն արդեն ցանկացել են շարժվել դեպի Երևան, մոտ 15 ոստիկանական մեքենաներ «Կոլցո» գործողությամբ օղակի մեջ են առել բողոքող վարորդներին ու պատգամավորներին, իսկ ավելի ուշ շուրջ 100 ոստիկան պաշարման մեջ են պահել թատրոնին հարակից Սայաթ-Նովայի պողոտան (միաժամանակ խոչընդոտելով գյումրեցիների բնականոն երթևեկությունը):
Աղբյուրը
➢ http://www.lragir.am/armsrc/country44267.html3 ➢ Գյումրիի ժուռնալիստների Ասպարեզ ակումբի և «Ժառանգություն» կուսակցության լրատվական ծառայության հաղորդագրություններ ➢ http://www.lragir.am/armsrc/country44221.html3 ➢ http://1in.am/arm/armenia_right_10156.html ➢ http://1in.am/arm/armenia_right_10143.html ➢ http://1in.am/arm/armenia_right_10139.html ➢ http://1in.am/arm/armenia_economy_10104.html ➢ http://news.am/arm/news/48283.html
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էր անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները

Ազատ տեղաշարժի իրավունքի խախտման դեպքերի ժամանակագրությունը և վերլուծությունը Հայ ազգային կոնգրեսի կողմից կազմակերպված հանրահավաքների օրերին

ք. Վանաձոր, մարտի 17
Խախտման նկարագրությունը
Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային տաքսիները ուղևորափոխադրում չեն իրականացրել: Ավտոկայանում միկրոավտոբուսների աշխատանքը համակարգող աշխատակիցները պատասխանել են, որ ամբողջ օրը միկրոավտոբուսներ չեն լինելու, քանի որ Երևանում «միտինգ» է:
Աղբյուրը
➢ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ, Սպիտակի Հելսինկյան խումբ / մոնիթորինգ ավտոկայանում ➢ http://www.lragir.am/armsrc/country45356.html3 ➢ http://www.lragir.am/armsrc/country45358.html3 ➢ http://news.am/arm/news/51695.html

Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Գյումրի, մարտի 17
Խախտման նկարագրությունը
Ըստ առաջին լրատվականի՝ Գյումրի - Երևան ավտոմայրուղին բաց է եղել, ոչ մի ոստիկան չի փակել այն, սակայն երթուղային տաքսիները և տաքսիները չեն աշխատել:
Աղբյուրը
http://1in.am/arm/armenia_right_13198.html
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների և տաքսիների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Ապարան, մարտի 17
Խախտման նկարագրությունը
Առավոտից չեն գործել Ապարանից Երևան մեկնող ավտոբուսները և երթուղային տաքսիները: Ոստիկանները տաքսիների վարորդներից հավաքել են վարորդական վկայականները, որպեսզի վերջիններս մարդկանց տեղափոխելու հնարավորություն չունենան:
Աղբյուրը
http://1in.am/arm/armenia_right_13189.html
Խախտման դրսևորման ձևը
1. Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների և տաքսիների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը 2. Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էին անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
ք. Մասիս, մարտի 17
Խախտման նկարագրությունը
Երթուղայինները ուղևորափոխադրում Երևանից-Մասիս կատարել են, իսկ Մասիսից Երևան՝ ոչ:
Աղբյուրը
http://1in.am/arm/armenia_right_13192.html
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Աշտարակ, մարտի 17
Խախտման նկարագրությունը
Չեն գործել Աշտարակից Երևան մեկնող ավտոբուսներն ու երթուղային տաքսիները: «Առաջին լրատվական»-ի տեղեկություններով, տեղական իշխանությունները

տաքսիներին հրահանգել են մարդկանց չտեղափոխել Երևան, իսկ մասնավոր տաքսիների վարորդների փաստաթղթերը, առանց որևէ պատճառաբանության, վերցրել են նրանցից՝ տեղեկացնելով միայն, որ իրենց փաստաթղթերը կարող են հաջորդ օրը ետ ստանալ ոստիկանությունից:
Աղբյուրը
http://1in.am/arm/armenia_right_13183.html
Խախտման նկարագրությունը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Վանաձոր, ապրիլի 8
Խախտման նկարագրությունը
«Առաջին լրատվական»-ի տեղեկություններով, վաղ առավոտից Վանաձորից Երևան մեկնող երթուղային տաքսիները չեն աշխատել: Վանաձորից Երևան երթևեկող բոլոր երթուղայինների և տաքսիների վարորդներին հրամայվել է չաշխատել:
Աղբյուրը
http://www.1in.am/arm/armenia_society_15646.html
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Լոռու մարզ, ապրիլի 28
Խախտման նկարագրությունը
Երևանի Ազատության հրապարակում ընդդիմության հանրահավաքի օրը չեն աշխատել Լոռու մարզի քաղաքներից Երևան ուղևորափոխադրություն իրականացնող միկրոավտոբուսները:
Աղբյուրը
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-04-28/article_4034/Traveling_to_Yerevan_is_again_Impeded.html
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Արթիկ, ք. Գյումրի, ապրիլի 28
Խախտման նկարագրությունը
«Առաջին լրատվական»-ի տեղեկություններով, Մասիս, Արտաշատ, Արթիկ, Գյումրի և դրանց հարակից տարածքներից եկող երթուղայիները չեն գործել, ուսանողները վաղ առավոտից չեն կարողացել հասնել Երևան: Աշխատել են միայն տաքսիները, որոնք ճանապարհին կանգնեցվել և ստուգվել են:
Աղբյուրը

http://1in.am/arm/armenia_society_17917.html
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Սեպտեմբերի 30 - հոկտեմբերի 8, 2011 թ. Հայ ազգային կոնգրեսի շուրջօրյա նստացույց-հանրահավաքի ընթացքում
ք. Վանաձոր, սեպտեմբերի 30 (Ժամը 09:30-11:00) հոկտեմբերի 1 (Ժամը 10:00-11:00)
Խախտման նկարագրությունը
Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային տաքսիները ուղևորափոխադրում չեն իրականացրել:
Աղբյուրը
➢ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ/ մոնիթորինգ ավտոկայանում ➢ /www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-10-01/article_4247/Instances_of_Violation_of_Freedom_of_Movement_in_Lori_Region_.html ➢ http://www.lragir.am/armsrc/country53990.html
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Գյումրի, սեպտեմբերի 30, 2011 թ. Առավոտից մինչև 13:00
Խախտման նկարագրությունը
Երևանից դեպի Գյումրի և Գյումրիից դեպի Երևան ուղևորափոխադրում չի իրականացվել:
Աղբյուրը
➢ http://www.shirakcentre.org/hy/news/1184-shirak-centre-ngo ➢ http://news.am/arm/news/76240.htmlhttp://news.am/arm/news/76240.html ➢ http://politnews.am/3/5151/Ճանապարհները-փակ-են
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Մարզեր Հոկտեմբեր 1, 2011 թ.՝ ժամը 10:00-13:00
Խախտման նկարագրությունը
Ըստ «Առաջին լրատվական»-ի տվյալների՝ մարզերից Երևան երթուղային միկրոավտոբուսները Երևան չեն հասել: Բոլոր ճանապարները վերահսկվել են

ոստիկանների կողմից, երթուղայինի ուղևորները ենթարկվել են ստուգման՝ առանց որևէ հիմնավորման: Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի, Սպիտակ քաղաքներից Երևան ուղևորափոխադրումներ չեն իրականացվել:
Աղբյուրը
➢ http://www.1in.am/arm/armenia_society_35639.html ➢ http://www.azatutyun.am/video/24346045.html?isArticle=1 ➢ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ և կազմակերպության Տաշիրի, Ստեփանավանի, Ալավերդու և Սպիտակի ներկայացուցչությունների կողմից ավտոկայաններում մշտադիտարկում ➢ /www.hcav.am/articles.php/language_arm/date_2011-10-01/article_4247/Instances_of_Violation_of_Freedom_of_Movement_in_Lori_Region_.html ➢ http://hetq.am/arm/news/4964/
Խախտման դրսևորման ձևը
1. Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը 2. Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էր անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
Գյումրի, հոկտեմբերի 1
Խախտման նկարագրությունը
Գյումրու ավտոկայանից առավոտից մինչ ժամը 13:30-ը Գյումրիից մայրաքաղաք մեկնել են 2-3 միկրոավտոբուս և տաքսիներ, որոնք ըստ ավտոկայանի աշխատակցուհու հավաստման՝ Աշտարակից ետ են վերադարձել, սակայն հարցումն անցկացնելու պահին դրանք դեռ Գյումրի վերադարձած չեն եղել: Իսկ արդեն 16:00-ի սահմաններում ավտոկայանի հերթապահը տեղեկացրել է, որ միկրոավտոբուսներ և տաքսիներ Երևանից գալիս են, բայց Գյումրիից Երևան չեն մեկնում:
Աղբյուրը
➢ http://www.asparez.am/news-hy/erevan_tanogh-hy/ ➢ http://news.am/arm/news/76240.html
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էր անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
գ. Ալագյազ, հոկտեմբերի 2, 2011 թ.
Խախտման նկարագրությունը
Վանաձոր-Երևան մայրուղու Ալագյազ համայնքի Արթիկ տանող ճանապարհի մուտքին մշտական հերթապահություն է իրականացվել ոստիկանության 10-12 աշխատակիցներ

ծառայողական «Վիլիս» մակնիշի մեքենաներով: Ոստիկանության աշխատակիցների կողմից որևէ մարդատար կամ բեռնատար ավտոմեքենա չի կանգնեցվել, միայն կանգնեցվել են ուղևորատար միկրոավտոբուսները, որոնց կանգնեցնելուց հետո ստուգել են փաստաթղթերը և թողել, որ շարունակեն ճանապարհը: Մշտադիտարկում իրականացնող ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցչի այն հարցին, թե ինչու են կանգնեցրել 16 ՍՍ 627 պետհամարանիշով միկրոավտոբուսը, վարորդը պատասխանել է, որ «Ամենայն հավանականությամբ ՀԱԿ-ի ցույցերի պատճառով»: Իսկ ոստիկանության աշխատակիցը սկզբում հարկ չի համարել ներկայանալ և ներկայացնել մեքենաները ստուգելու պատճառը՝ հայտարարելով՝ «Դուք ով եք, որ ես ներկայանամ», ի վերջո միայն երկար վիճաբանությունից հետո հայտարարել է, որ իբր հանցագործություններ են կատարվում, և իրենց գործողություններն ուղղված են դրանց բացահայտմանը:
Աղբյուրը
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էր անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
Լոռու և Շիրակի մարզեր, հոկտեմբերի 3
Խախտման նկարագրությունը
Լոռու և Շիրակի մարզերից դեպի Երևան մեկնող «Գազելները» լավագույն դեպքում բնակիչներին հասցրել են մինչև Աշտարակ քաղաք և այնտեղ ավարտել երթուղին: Գյումրի-Երևան ուղևորափոխադրում իրականացնող 0826 Լ պետհամարանիշով միկրոավտոբուսը Աշտարակի «պոստի» մոտ կանգնեցվել է ոստիկանների կողմից, իսկ ուղևորներն իջեցվել են: Այնուհետև ուղևորներից ոստիկանները ստորագրություն են վերցրել, որ տվյալ միկրոավտոբուսով Երևան եկողներից և ոչ մեկը չի մասնակցի ՀԱԿ-ի հանրահավաքին, որից հետո միայն նրանց թույլ են տվել շարունակել ճանապարհը:
Աղբյուրը
➢ http://www.a1plus.am/am/politics/2011/10/03/road ➢ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ ➢ http://www.a1plus.am/am/politics/2011/10/03/arthur-sakunts ➢ http://armtimes.com/28402
Խախտման դրսևորման ձևը
1. Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը 2. Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էին անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
Լոռու մարզ, հոկտեմբերի 4 - 5

Խախտման նկարագրությունը
Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր քաղաքներից ուևորափոխադրումներ իրականացվել են անկանոն և ուշացումներով: Երթուղային տաքսիները կանգնեցվել են ավտոմայրուղին վերահսկող ոստիկանության աշխատակիցների կողմից, ստուգվել են վարորդի փաստաթղթերը, ուղևորների քանակը: Սպիտակ քաղաքից Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող յուրաքանչյուր երթուղային տաքսի ուղեկցվում էր մեկ ոստիկանության աշխատակցի կողմից:
Աղբյուրը
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ, Սպիտակի Հելսինկյան խումբ, կազմակերպության Տաշիրի, Ստեփանավանի և Ալավերդու ներկայացուցչություններ
Խախտման դրսևորման ձևը
1. Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը 2. Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էին անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
գ. Ալագյազ, հոկտեմբեր 5
Խախտման նկարագրությունը
Վանաձոր-Երևան մայրուղու Ալագյազ համայնքի Արթիկ տանող ճանապարհի մուտքին մշտական հերթապահություն է իրականացրել Ոստիկանության 6-7 աշխատակից: 14:18-16:25-ի ընթացքում կազմակերպության կողմից իրականացված մոնիթորինգի ընթացքում դեպի Երևան են մեկնել 7 երթուղային տաքսի: Դիտարկված երթուղային տաքսիների մեծ մասը ուղեկցվել է Ոստիկանության աշխատակիցների կողմից, իսկ նրանք որոնք չեն ուղեկցվել, վարորդն իջել է մեքենայից և պահանջել ներկայացրել փաստաթղթերը:
Աղբյուրը
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էին անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
Լոռու մարզ, հոկտեմբերի 6
Խախտման նկարագրությունը
ք. Վանաձոր Վանաձորի ավտոկայանից Երևան-Վանաձոր երթուղին սպասարկող ոչ մի երթուղային տաքսի չի մեկնել, բացառությամբ երկուսի. ժամը 16:20-ին Երևան են մեկնել 0311, 0315 պետհամարանիշներով երթուղային տաքսիները, որոնցից յուրաքանչյուրի մեջ գտնվել

է միայն 4 ուղևոր: ք. Սպիտակ Սպիտակից Երևան, ինչպես նաև Երևանից Սպիտակ ուղևորափոխադրումներ չեն իրականացվել: Տաքսի ծառայության վարորդներից մեկը տեղեկացրել է, որ առավոտյան Ոստիկանության աշխատակիցները զանգահարել են ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կարգավարներին և կարգադրել, որ միկրոավտոբուսներ Երևան չգնան հանրահավաքի պատճառով: ք. Ստեփանավան Ժամը 12:00, 14:00, 15:00-ի գրաֆիկով մեկնող երթուղային տաքսիները չեն աշխատել, ուղևորները ստիպված են եղել մեկնել տաքսիներով, իսկ գրաֆիկով նախատեսված մյուս ժամերի համար հավաքված մարդիկ չեն եղել: ք. Տաշիր Տաշիր - Երևան երթուղին սպասարկող երթուղային տաքսիներն աշխատել են:
Աղբյուրը
➢ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ, Սպիտակի Հելսինկյան խումբ, կազմակերպության Տաշիրի, Ստեփանավանի և Ալավերդու ներկայացուցչություններ ➢ http://lragir.am/armsrc/pubcorr-lrahos54261.html ➢ «Արժանապատիվ տրանսպորտ» քաղաքացիական նախաձեռնություն ➢ http://hra.am/am/events/2011/10/06/transport
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էր անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
ք. Աշտարակ, հոկտեմբերի 6
Խախտման նկարագրությունը
Շուրջ 6 օր Աշտարակի բնակիչները չեն կարողացել երթուղայիններով դուրս գալ իրենց շրջանի սահմաններից: Իսկ հոկտեմբերի 6-ին ճանապարհատրանսպորտային ոստիկանները թույլ չեն տվել, որ նույնիսկ ուսանողական ավտոբուսը դուրս գա քաղաքից: Ոստիկանները հրահանգել են ուղևորներին դուրս գալ ավտոբուսից ու վերադառնալ տուն՝ ասելով. «Սպասեք մինչև քաղաքում կրքերը կհանդարտվեն, այսինքն՝ երբ ՀԱԿ-ի ցույցերը կավարտվեն»:
Աղբյուրը
➢ http://www.a1plus.am/am/politics/2011/10/06/ashtarak ➢ http://www.a1plus.am/am/social/2011/10/06/tansport
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էին անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները

ք. Չարենցավան, հոկտեմբերի 6
Խախտման նկարագրությունը
Չարենցավան-Երևան երթուղային տաքսիների գծերի տերերը ոստիկանների ներկայությամբ վարորդներից հավաքել են վարորդական իրավունքները և հրահանգել գնալ տուն ու չաշխատել: Հրազդանի և Չարենցավանի փողոցներում խստացված հսկողություն է իրականացվել Ոստիկանության ծառայության աշխատակիցների կողմից՝ Հրազդանի ոստիկանապետի տեղակալի անմիջական հսկողության տակ:
Աղբյուրը
http://www.a1plus.am/am/politics/2011/10/06/vanatur
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էին անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
ք. Վանաձոր, հոկտեմբերի 7
Խախտման նկարագրությունը
Վանաձորից Երևան ուղևորափոխադրումներ չեն իրականացվել
Աղբյուրը
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Աշտարակ, Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 7
Խախտման նկարագրությունը
Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում կաթվածահար էր ոչ միայն միջքաղաքային տրանսպորտը, այլև Աշտարակը գյուղերին կապող ուղևորափոխադրությունը, որն ամբողջությամբ դադարել է հոկտեմբերի 7-ին: Նույնիսկ տաքսիներին են արգելել ուղևոր տեղափոխել մայրաքաղաք:
Աղբյուրը
http://www.a1plus.am/am/politics/2011/10/07/ashtarak
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Արմավիր, սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 7
Խախտման նկարագրությունը
Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրից Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային տաքսիները ուղևորափոխադրում չեն իրականացրել: Հոկտեմբերի 7-ին հատուկ վերահսկողություն

է սահմանվել նաև տաքսիների վրա, տաքսիները ոչ միայն իրավունք չունեին ավտոկայանից ուղևոր վերցնել, այլև արգելված էր ավտոկայանի տարածքում տաքսիներին կանգառել:
Աղբյուրը
http://lragir.am/armsrc/pubcorr54353.html
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Գյումրի, հոկտեմբերի 7
Խախտման նկարագրությունը
Գյումրի քաղաքից Երևան ուղևորափոխադրում չի իրականացվել
Աղբյուրը
http://www.asparez.am/gyumri-hy/arden_mek_shabat-hy/
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Մարզեր, հոկտեմբերի 7
Խախտման նկարագրությունը
Գյումրիի, Մարալիկի, Ապարանի, Եղվարդի, Աշտարակի, Սևանի, Չարենցավանի, Աբովյանի, Նաիրիի շրջանի, Քասախի, Ուջանի, Վանատուրի, Զորակապի մոտ 2000 բնակիչներ Երևանի մուտքից ոտքով հասել են Ազատության հրապարակ:
Աղբյուրը
➢ http://armtimes.com/28547 ➢ http://www.youtube.com/watch?v=zIdcmb4sPmY&feature=share
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Նոյեմբերյան, հոկտեմբերի 6-7
Խախտման նկարագրությունը
Չի գործել Նոյեմբերյան-Երևան և հակառակ ուղղությամբ միկրոավտոբուսային երթուղին: Երևանից Նոյեմբերյան հասնելու համար նոյեմբերյանցիները ստիպված են եղել Երևանից Բերդ մեկնող միկրոավտոբուսով գնալ Իջևան, այնտեղից էլ 5 հազար դրամ ծախսելով՝ տաքսիով հասնել Նոյեմբերյան:
Աղբյուրը
http://tesankyun.am/2011/10/հանրահավաքի-պատճառով-միկրոավտոբուսա
Խախտման դրսևորման ձևը

Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Իջևան, հոկտեմբերի 8
Խախտման նկարագրությունը
Իջևան-Երևան երթուղու վարորդների հավաստմամբ նշված ժամանակահատվածում ոստիկանները խոչընդոտել են նաև Իջևանից Երևան ուղևորների փոխադրմանը: Վարորդները նշել են, որ միջմարզային երթուղայինները կանգնեցվում և ստուգվում են նախ՝ Սևանի «գայի պոստում», հետո էլ՝ մայրաքաղաք չհասած, Աբովյան քաղաքի խաչմերուկում՝ կրկին Ճանապարհային ոստիկանության կողմից:
Աղբյուրը
http://lragir.am/armsrc/country54383.html
Խախտման դրսևորման ձևը
Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում սահմանափակվել էր անձանց ազատ տեղաշարժի և հավաքներին մասնակցելու իրավունքները
Լոռու մարզ, հոկտեմբերի 28
Խախտման նկարագրությունը
Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի քաղաքներում դադարեցվել են միկրոավտոբուսներով Երևան ուղևորափոխադրումները: Ի տարբերություն Ստեփանավան, Տաշիր և Ալավերդի քաղաքների Վանաձոր և Սպիտակ քաղաքներում միկրոավտոբուսներն աշխատել են:
Աղբյուրը
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ, կազմակերպության Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի քաղաքների ներկայացուցչություններ, Սպիտակի Հելսինկյան խումբ
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Արարատի մարզ (Մարմարաշեն, Նոր Խարբերդ, Այնթափ, Արտաշատ), հոկտեմբերի 28
Խախտման նկարագրությունը
«Ա1+»-ի հավաստմամբ, Արարատի մարզի Մարմարաշեն, Նոր Խարբերդ, և Այնթափ գյուղերից դեպի Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող 104 համարի տրանսպորտը փոխել է երթուղին և մեկնարկել է Նորագավիթի ոստիկանական հենակետի մոտից: Հարյուրավոր քաղաքացիներ ստիպված են եղել մի քանի կիլոմետր ոտքով քայլելով հասնել երթուղայինի կանգառին, որ այնտեղից կարողանան ուղևորվել Երևան: Նույն օրը «Ա1+»-ի տեսախցիկը ֆիքսել է քաղաքացիների բողոքը՝ մարդիկ տեղեկացրել են, որ այդ օրը կեսօրից դադարել է նաև Արտաշատ-Երևան միկրոավտուբուսային երթուղու աշխատանքը:

Երթուղին սպասարկող վարորդները մասնավոր զրույցում նշել են, որ խափանման պատճառը ՀԱԿ-ի կազմակերպած հանրահավաքն է, սակայն հրաժարվել են նույնն ասել տեսախցիկի առջև: Նմանատիպ իրավիճակ է եղել նաև Արտաշատի ավտոկայանում, որտեղ կեսօրից հետո դադարեցվել է երթուղային միկրոավտոբուսների աշխատանքը՝ դեպի Երևան: Հոկտեմբերի 28-ին ՀԱԿ-ի հանրահավաքի օրը, մարզերից Երևան մեկնող միջքաղաքային տրանսպորտի կասեցման վերաբերյալ «Ա1+»-ի գրավոր հարցմանը ՀՀ կապի և տրանսպորտային նախարարության մամլո ծառայության նոյեմբերի 9-ի պատասխանում ասվում է. «Կապի և տրանսպորտի նախարարության տրանսպորտային տեսչության աշխատակիցների իրականացրած վերահսկողական գործառույթների արդյունքում պարզվել է, որ Արտաշատ-Երևան, ինչպես նաև Արարատի մարզի Մարմարաշեն, Նոր Խարբերդ և Այնթափ համայնքներից դեպի Երևան ներքաղաքային թիվ 104 երթուղին 2011 թ. հոկտեմբերի 28-ին սպասարկվել է չվացուցակի համաձայն: Նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Պետրոս Դեմիրճյանը, սակայն, «Ա1+»-ի հետ հեռախոսազրույցում չի բացառել, որ մարզային երթուղիների աշխատանքներում տեղի ունեցող խախտումները կարող են աննկատ մնալ տրանսպորտային տեսչության տեսադաշտից:
Աղբյուրը
http://www.a1plus.am/am/social/2011/10/28/roads
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
Լոռու մարզ, նոյեմբերի 25
Խախտման նկարագրությունը
Ուսումնասիրություն է իրականացվել Վանաձոր, Ալավերդի, Սպիտակ, Տաշիր և Ստեփանավան քաղաքների ավտոկայաններում, որի արդյունքում պարզվել է, որ նշված քաղաքներից միայն Վանաձորից է իրականացվել ուղևորափոխադրում: Ստեփանավանից դեպի Երևան ուղևորափոխադրումներ ընդհանրապես չեն իրականացվել: Սպիտակից և Ալավերդուց դեպի Երևան ուղևորափոխադրումներ են իրականացվել միայն առավոտյան, իսկ օրվա 2-րդ կեսից ուղևորափոխադրումներ դեպի մայրաքաղաք չեն իրականացվել: Տաշիր քաղաքից թույլատրել են Երևան մեկնել միայն այն անձանց, ովքեր շտապ բժշկական օգնության կարիք են ունեցել, կամ ինքնաթիռի տոմս:
Աղբյուրը
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի արագ արձագանքման խումբ, կազմակերպության Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի քաղաքների ներկայացուցչություններ, Սպիտակի Հելսինկյան խումբ

Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Էջմիածին, ք. Աբովյան, նոյեմբերի 25
Խախտման նկարագրությունը
Էջմիածնից մայրաքաղաք ուղևորվող բնակիչների հավաստմամբ վաղ առավոտից հասարակական տրանսպորտը չի գործել: Չեն գործել նաև Աբովյան-Երևան 259, 261, 267 երթուղիները «Ցույց ա, չեն թողում քշենք» պատճառաբանությամբ:
Աղբյուրը
http://noratert.am/news/id/16683.html
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Էջմիածին, ք. Աշտարակ, նոյեմբերի 25
Խախտման նկարագրությունը
«Արժանապատիվ տրանսպորտ» քաղաքացիական նախաձեռնության տեղեկացմամբ չեն իրականացվել Էջմիածին – Երևան և Աշտարակ – Երևան ուղղությամբ ուղևորափոխադրումներ:
Աղբյուրը
➢ http://www.report.am/news/society/mijmarzayin-transport-krkin-chi-gorcum.html ➢ «Արժանապատիվ տրանսպորտ» քաղաքացիական նախաձեռնություն
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը
ք. Սևան, ք. Էջմիածին, ք. Եղվարդ, ք. Գյումրի, նոյեմբերի 25
Խախտման նկարագրությունը
ՀԱԿ արտաքին հարաբերությունների հանձնախմբի համակարգող Վլադիմիր Կարապետյանի տեղեկացմամբ ըստ հանրապետության բնակիչներից ստացված տեղեկությունների, չի աշխատել Սևանից, Էջմիածնից և Եղվարդից դեպի Երևան միջքաղաքային տրանսպորտը: «Էջմիածնում քրեականի աշխատակիցները ահաբեկում են այն մարդկանց, ովքեր ցանկանում են տրանսպորտ նստել և գալ Երևան»,- հաղորդել է Վլադիմիր Կարապետյանը: Չեն գործել անգամ Արմավիրի գյուղերից Երևան գնացող ուսանողական ավտոբուսները: Մի շարք բնակավայրերի ավտոկայաններում ոստիկանները հսկողություն են իրականացրել: Հայ ազգային կոնգրեսի Գյումրիի գրասենյակի տեղեկացմամբ այնտեղ ևս դեպի Երևան մեկնող երթուղային տաքսիները հանվել են երթուղիներից: Տրանսպորտի չաշխատելը պատճառաբանել են ճանապարհների փակ լինելով: Մինչդեռ, ըստ Արտակարգ

իրավիճակների նախարարության կայքէջի, նոյեմբերի 25-ին՝ ժամը 09:30-ի դրությամբ, դժվար անցանելի են եղել միայն Տավուշի մարզի Բերդ-Ճամբարակ, Դիլիջան-Երևան, Բերդ-Իջևան, Կիրանց-Ոսկեպար ավտոճանապարհները, ինչպես նաև Սյունիքի մարզի Սիսիան-Գորիս և Մեղրի-Կապան ավտոճանապարհը: Հայաստանում մյուս ճանապարհները անցանելի են եղել:
Աղբյուրը
➢ http://www.armtown.com/news/am/a1p/20111125/201111252/ ➢ http://www.armtown.com/news/am/lra/20111125/56853 ➢ http://www.top-news.am/index.php?newsid=5122&ng=7&nt=1 ➢ http://www.top-news.am/index.php?newsid=5122&ng=7&nt=1 ➢ http://www.a1plus.am/am/regions/2011/11/25/gyumri
Խախտման դրսևորման ձևը
Ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների անգործության հետևանքով խախտվել է անձանց ազատ տեղաշարժի իրավունքը

Ազատ տեղաշարժի խախտման դեպքերի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված գործողությունները

Հավելված 2

Ուղարկման ամսաթիվը	Պետական մարմինը և փաստաթղթի բովանդակությունը	Պետական մարմնի կողմից ձեռք առնված գործողության նկարագրությունը և ժամկետը
02.15.2011 թ.	Հանցագործության մասին հաղորդում՝ ուղղված ՀՀ գլխավոր դատախազությանը ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելու մասին	1) 22.02.2011 թ. ՀՀ գլխավոր դատախազության կողմից հաղորդումը հասցեագրվել է Շիրակի մարզի դատախազություն 2) 04.03.2011 թ. հաղորդումը Շիրակի մարզի դատախազությունից ուղարկվել է ոստիկանության Շիրակի մարզի քննչական բաժին 3) 15.04.2011 թ. Շիրակի մարզի քննչական բաժնից ստացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում
05.10.2011 թ.	Բողոք՝ ուղղված ՀՀ Շիրակի մարզի դատախազությանը ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության, Շիրակի մարզի քննչական	16.04.2011 թ. ՀՀ Շիրակի մարզի դատախազության կողմից կայացվել է որոշում կազմակերպության բողոքը մերժելու մասին

	բաժանմունքի քննիչի 15.04.2011 թ. քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը վերացնելու պահանջի մասին	
30.05.2011 թ.	Դիմում՝ ուղղված ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանին, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությանը, Շիրակի մարզի քննչական բաժանմունքի քննիչի 15.04.2011 թ. քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը վերացնելու պահանջի մասին	28.06.2011 թ. ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է կազմակերպության դիմումը
08.07.2011 թ.	Վերաքննիչ բողոք ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2011 թ. որոշման դեմ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով	17.08.2011 թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կազմակերպության բողոքը մերժվել է և օրինական ուժի մեջ է թողնվել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2011 թ. որոշումը
05.09.2011 թ.	Վճռաբեկ բողոք 17.08.2011 թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով	24.10.2011 թ. ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է որոշում վճռաբեկ բողոքը հետ վերադարձնելու մասին
17.02.2011 թ.	Հանցագործության մասին հաղորդում՝ ուղղված Լոռու մարզի դատախազությանը՝ ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելու մասին	02.03.2011 թ. Լոռու մարզի դատախազությունից ստացվել է պատասխան գրություն, ըստ որի հաղորդումն ուղարկվել է Լոռու մարզի քննչական բաժին
17.02.2011 թ.	Հանցագործության մասին	03.05.2011 թ. Լոռու մարզի քննչական

	հաղորդում՝ ուղղված Լոռու մարզի քննչական բաժնին, ազատ տեղաշարժը սահմանափակելու, արգելելու մասին:	բաժնից /քննիչ Մարտիրոսյան/ ստացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում
14.05.2011 թ.	Բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժանմունքի քննիչ Վ. Մարտիրոսյանի 03.05.2011 թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ:	ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է պատասխան այն մասին, որ կազմակերպության բողոքը ուղարկվել է Լոռու մարզի դատախազության քննարկմանը 19.05.2011 թ. Լոռու մարզի դատախազությունից ստացվել է բողոքը մերժելու մասին որոշում, որով մերժվել է կազմակերպության բողոքը
03.06.2011 թ.	Դիմում՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժանմունքի քննիչ Վ. Մարտիրոսյանի 05.03.2011 թ. քրեական գործի հարուցումը մերժելու դեմ	31.08.2011 թ. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ստացվել է կազմակերպության դիմումը մերժելու մասին որոշում
10.09.2011 թ.	Վերաքննիչ բողոք ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 31.08.2011 թ. որոշման դեմ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով	21.10.2011 թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կազմակերպության բողոքը մերժվել է և օրինական ուժի մեջ է թողնվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը
10.10.2011 թ.	Տեղեկատվության հարցում՝ ուղղված ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, տեղեկանալու, թե ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր	24.10.2011 թ. Տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է գրություն, որով ներկայացվել է ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ցանկը և 2011 թ.

	ուղևորափոխադրումներ իրականացնող քանի կազմակերպություն է գործում ՀՀ-ում/մարզերից/, 2011 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 9-ը դրանցից որոնք են ենթարկվել վարչական պատասխանատվության, որ նորմի խախտման հիմքով և ինչ չափի	սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում 11 ընկերությունների նկատմամբ կազմվել է 14 վերահսկողական արդյունքների ամփոփման արդյունքների արձանագրություններ՝ հիմնականում երթուղու ձախողման պատճառով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքի 137[2] հոդվածի 4-րդ մասով նախատեսված խախտման համար վերը նշված 11 կազմակերպությունները պատասխանատվության են ենթարկվել նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով (5000 ՀՀ դրամ)
21.11.2011 թ.	Վճռաբեկ բողոք 21.10.2011 թ. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ՝ նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով	28.12.2011 թ. ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է կազմակերպության բողոքը
28.04.2011 թ.	Հայտարարություն է ուղարկվել Տրանսպորտի և կապի նախարարություն և Լոռու մարզի մարզպետարան այն մասին, որ 28.04.2011 թ. Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և Տաշիր քաղաքներից ուղևորափոխադրումներ չեն իրականացվել, ինչպես նաև պահանջ է ներկայացվել նշված քաղաքներից դեպի Երևան երթուղին սպասարկող կազմակերպությունների լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ	16.06.2011 թ. Տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է պատասխան այն մասին, որ կազմակերպության կողմից մատնանշված փաստերը իրականությանը համապատասխանում են մասնակիորեն և ապրիլի 28-ին ուղևորահոսքի կտրուկ աճի պատճառով երթուղիները սպասարկող կազմակերպությունները աշխատել են չվացուցակների խախտումներով
31.05.2011 թ.	Վարչական բողոք ՀՀ	1) 08.06.2011 թ. ՀՀ վարչապետի

	վարչապետ Տիգրան Սարգսյանին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և Լոռու մարզպետի անգործությունը վերացնելու և 28.04.2011 թ. կազմակերպության ներկայացրած հայտարարության վերաբերյալ համապատասխան միջոցներ ձեռնարկելու մասին:	հանձնարարականով կազմակերպության կողմից ներկայացված վարչական բողոքը վերահասցեագրվել է Տրանսպորտի և կապի նախարարությանը: 2) 22.06.2011 թ. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ստացվել է պատասխան այն մասին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացված վարչական բողոքում նշված փաստարկները՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության անգործության վերաբերյալ, անհիմն են, իսկ հայտարարության մեջ նշված պահանջի՝ նշված երթուղիների սպասարկման իրավունքից զրկելու վերաբերյալ իրավական հիմքերը բացակայում են՝ իրավախախտումը նույն օրը վերացվելու պատճառով:
01.10.2011 թ.	Հայտարարություն՝ ուղղված ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Մանուկ Վարդանյանին և Լոռու մարզի մարզպետ Արթուր Նալբանդյանին, Լոռու մարզի Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր, Ալավերդի քաղաքների, ուղևորափոխադրումները կանոնավոր կերպով կազմակերպելու համար պատասխանատու անձանց կողմից ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքը խախտելու և խախտումները կանխարգելելու ուղղությամբ անգործություն դրսևորելու վերաբերյալ:	11.10.2011 թ. կազմակերպության հայտարարության կապակցությամբ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանը պատասխանել է, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից Երևանից դեպի Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան և հակառակ ուղղությամբ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները նախազգուշացվել են՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան ուղևորափոխադրումներ իրականացնելու համար: Համաձայն նույն օրենքի 12-րդ հոդվածի՝ նախազգուշացումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, խախատումը չվերացնելու, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու

		դեպքում կազմակերպությունը կզրկվի երթուղու սպասարկման իրավունքից:
28.11.2011 թ.	Դիմում է ներկայացվել Տրանսպորտի և կապի նախարարություն Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր և Ստեփանավան քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին երթուղու սպասարկման իրավունքից զրկելու պահանջով՝ նախազգուշացումից հետո խախտումը չվերացնելու և մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու հիմքով՝ հիմք ընդունելով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 11.10.2011 թ. գրությունը:	29.12.2010 թ. Տրանսպորտի և կապի նախարարությունից ստացվել է պատասխան այն մասին, որ ՀՀ տրանսպորտի տեսչության Լոռու մարզի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից վերահսկողության գործառույթների իրականացման արդյունքում պարզվել է՝ 2011 թ. նոյեմբերի 25-ին Ստեփանավան, Սպիտակ և Ալավերդի քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումները ժամը 14:00-ից հետո ուղևորահոսքի ծանրաբեռնվածության պատճառով սպասարկվել է չվացուցակի որոշակի խախտումներով՝ օգտագործելով չվացուցակով մինչև ժամը 14:00-ն գրեթե բոլոր չվերթերի համար նախատեսված բոլոր տրանսպորտային միջոցները: Հաջորդ օրը խախտումները վերացվել են և երթուղու սպասարկումը իրականացվել է պատշաճ՝ ըստ հաստատված չվացուցակի: Նկատի ունենալով, որ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված է երթուղու սպասարկման իրավունքից զրկման կոնկրետ ընթացակարգ, որը ենթադրում է, որ կազմակերպությանը խախտումը հայտնաբերելուց հետո տրվում է ժամկետ խախտումը վերացնելու համար: Խախտումը սահմանված ժամկետում վերացնելու դեպքում երթուղային ցանցը կազմակերպող մարմինը իրավասու չէ կիրառել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքները,

		ուստի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը իրավասու չէ նշված երթուղին սպասարկող կազմակերպության նկատմամբ կիրառել՝ կազմակերպության հայտարարությամբ պահանջվող «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքները:

Հավելված 3

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Հովսեփյանին

Ե/2011- 28

15.02.2011 թ.

ՀԱՂՈՐԴՈՒՄ

(Հանցագործության՝ ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելու մասին)

Հարգելի պարոն Հովսեփյան,

2011 թվականի փետրվարի 15-ին՝ առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում Գյումրի քաղաքում վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդները փորձել են մեկնել Վանաձոր՝ մասնակցելու Վանաձոր քաղաքում ժամը 12:00-ին կազմակերպված բողոքի ակցիային՝ ուղղված ՀՀ մաքսային օրենսդրության վերջին փոփոխությունների դեմ:

Այդ բողոքի ակցիան նախաձեռնել են Վանաձորի այն վարորդները, որոնց ավտոմեքենաները եւս վրացական պետհամարանիշներով են: Սակայն ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են մեքենաների շարժը դեպի Վանաձոր՝ սկզբից հորդորելով վարդորդներին ձեռնպահ մնալ ճանապարհորդությունից, այնուհետեւ կտրականապես արգելելով:

Վարորդները, այնուամենայնիվ, ուշացումով՝ ժամը 11:20-ին, ուղեւորվել են Վանաձոր: Արդեն Ջաջուռ գյուղի մոտ պարզվել է, որ ճանապարհը փակ է ոստիկանության աշխատակիցների կողմից: Ժամը 13:30-ի սահմաններում Ջաջուռ գյուղի տարածքում հավաքվել էին ավելի քան 50 ատոմեքենաներ, որոնց վարորդներին ոստիկանության աշխատակիցները չէին թույլատրում շարժվել դեպի Գյումրի քաղաք: Ցանկացած այն դեպքում, երբ որեւէ մեքենայի վարորդ փորձում էր մեքենան վարելով հատել ոստիկանների կողմից «փակված» ճանապարհի հատվածը, ոստիկանության աշխատակիցները կենդանի պատ էին կառուցում՝ իրար կողքի կանգնած ոստիկաններով, այսպիսով ֆիզիկապես անհնարին դարձնելով վարորդների տեղաշարժը:

Ողջ ժամանակահատվածում Ջաջուռ գյուղի մոտակայքում առաջացած կուտակման վայրում էին նաեւ գտնվում Ախուրյանի ոստիկանության բաժնի պետ գնդապետ Ենոքյանը եւ նրա տեղակալ, փոխգնդապետ Գալստյանը: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցի այն հայտարարությանը, որ ոստիկանությունը զբաղվում է ինքնիրավչությամբ եւ հակաօրինական գործողություններ է իրականացնում, Ախուրյանի ոստիկանության բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Գալստյանը հայտնել է հավաքվածներին, որ

իրենք ունեն համապատասխան հրաման փակել ճանապարհը եւ թույլ չտալ վրացական պետհամարանիշներ ունեցող մեքենաներին ուղեւորվել Գյումրիից Վանաձոր ակցիային մասնակցելու նպատակով՝ ավելացնելով, որ իր գործողություններն օրինաչափ են եւ ինքը պատրաստ է պատասխանատվություն կրել իր գործողությունների համար:

Տվյալ պարագայում Ախուրյանի ոստիկանության բաժնի պետը եւ մյուս աշխատակիցները իրականացրել են ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակում՝ առանց օրինական հիմքերի:

Ցանկացած պարագայում անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումներն իրականացվում են օրենքի հիման վրա, այնինչ այս պարագայում քաղաքացիների ազատ տեղաշարժի սահմանափակումն իրականացվել էր «ինչ-որ բանավոր հրահանգի» հիման վրա, ինչը հիմք է ստեղծում պնդելու, որ կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածով արգելված արարք, այն է. «1. Պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ... եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, ...պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Ավելին, Ախուրյանի ոստիկանության բաժնի պետ, գնդապետ Ենոքյանը, նրա տեղակալ, փոխգնդապետ Գալստյանը եւ ոստիկանության մյուս աշխատակիցները, արգելելով քաղաքացիների տեղաշարժը, կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 163 հոդվածով արգելված արարք, այն է. «Օրինական ժողովներ, հանրահավաքներ, երթեր կամ ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելը ... պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Այսպիսով, ոստիկանության աշխատակիցները, փակելով ճանապարհը, միտումնավոր խոչընդոտել են քաղաքացիների՝ հավաքներին եւ ցույցերին մասնակցելու իրավունքի իրացմանը:

Տվյալ պարագայում, սույն հաղորդման մեջ նշված պաշտոնատար անձանց գործողություններում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածով եւ 375 հոդվածի 1-ին մասով չթույլատրված արարքի կատարման հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածները՝ պահանջում ենք օրենքով սահմանված կարգով ընթացք տալ սույն հաղորդմանը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-182-րդ հոդվածների կարգով տեղեկացնել ընդունված որոշման մասին:

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց

Հավելված 3.1

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա
59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2011-02/17-32

17.02.2011 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Հովսեփյանին

պատճենը՝ ՀՀ Հատուկ քննչական
ծառայության պետ Ա. Միրզոյանին

ՀԱՂՈՐԴՈՒՄ
(Հանցագործության՝ ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելու մասին)

Հարգելի պարոն Հովսեփյան,

2011 թվականի փետրվարի 15-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Վանաձոր-Երեւան ճանապարհի Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ մինչեւ Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկից դեպի Երեւան գնացող մոտ 1 կմ հատվածում, ճանապարհը դարձել է անանցանելի, եւ մոտ 1 ժամ ամբողջ երթեւեկությունը եղել է դադարեցված:

Դեպքի նկարագրություն

2011 թվականի փետրվարի 15-ին Վանաձոր քաղաքի մի խումբ վարորդներ նախաձեռնել են բողոքի ակցիա՝ ուղղված ՀՀ մաքսային օրենսգրքում 2010 թվականին իրականացված փոփոխություններին, որոնց համաձայն՝ վրացական պետահամարանիշներով ավտոմեքենաները պետք է պարտադիր մաքսազերծվեն Հայաստանում օգտագործելու համար:

Բողոքի ակցիային ցանկացել են միանալ նաեւ Գյումրի քաղաքից մի խումբ վարորդներ, որոնք 2011 թվականի փետրվարի 15-ին՝ առավոտյան ժամը 11:00-ի սահմաններում, փորձել են շարժվել Վանաձոր: Ջաջուռ գյուղի մոտ նրանց կանգնեցրել են ՀՀ ոստիկանության եւ ՀՀ ճանապարհային ոստիկանության մի խումբ աշխատակիցներ եւ արգելել շարժվել դեպի Վանաձոր /տե՛ս կից ներկայացվող Ե/2011-28 հաղորդումը/: Հենց այդ վայրից հեռախոսով Լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը զանգահարել է ոստիկանության թեժ գիծ 54 69 12 հեռախոսահամարով /տե՛ս կից ներկայացվող տեսանյութը/:

Նույն ժամանակահատվածում Վանաձոր քաղաքում Ազգային ժողովի «Ժառանգություն» կուսակցության պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի, Ստեփան Սաֆարյանի եւ

կուսակցության նախագահ Արմեն Մարտիրոսյանի մասնակցությամբ կայացել է հանրահավաք: Տեղեկանալով Ջաջուռում տեղի ունեցող խոչընդոտների մասին՝ երթի մասնակիցները Վանաձորից շարժվել են դեպի Ջաջուռ գյուղ: Այդ ժամանակահատվածում Ջաջուռ գյուղի մոտից ոստիկանները հեռացել են, եւ գյումրեցի վարորդները շարժվել են դեպի Վանաձոր:

Մեծ Պարնի գյուղի մոտ Գյումրիից Վանաձոր եւ Վանաձորից Գյումրի շարժվող մեքենաները հանդիպել են իրար եւ շարժվել դեպի Վանաձոր: Ճանապարհին՝ մինչեւ Վանաձոր քաղաքի մուտք, ոստիկանության ոչ մի մեքենա չի հանդիպել: Ճանապարհը ձյան պատճառով դրեւէ անանցանելիության խնդիր չի առաջացրել, ավելին՝ Վանաձոր քաղաքին ավելի մոտ հատվածում եղել է ձյունից ամբողջությամբ մաքրված:

Ժամը 17:30-ի սահմաններում Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ մինչեւ Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկ, մոտ 1 կմ հատվածում, Տարոն 3-րդ թաղամասի դիմաց, հավաքվել են ճանապարհային ոստիկանության մոտ 20 աշխատակիցներ իրենց մեքենաներով:

Այնուհետեւ հենց այդ նույն հատվածում ճանապարհային ոստիկանության մեքենաներին զուգահեռ փողոցի երթեւեկելի հատվածի հենց մեջտեղում կանգնել է տրակտոր /տե՛ս կից ներկայացվող Ն-3, Ն-4 նկարները/: Կարճ ժամանակ անց ճանապարհի այդ հատվածը դարձել է անանցանելի /տե՛ս կից Ն-1, Ն-2, Ն-7, Ն-9 նկարները/: Մոտ 15 րոպե անց ճանապարհային ոստիկանության աշխատակիցներին միացել են ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Համբարյանը, ոստիկանության Վանաձորի բաժնի պետ Ս.Հ.Ավետիսյանը, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ սպայական վաշտի հրամանատար Մ.Վ.Կարապետյանը:

Այս դեպքում եւս ոստիկանության աշխատակիցները չեն ներկայացել, չեն ներկայացրել դեպի Վանաձոր ճանապարհը փակելու պատճառները: Աժ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի այն հարցին, թե ինչու է փակվել ճանապարհը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Համբարյանը պատասխանել է, որ տրակտորը մաքրում է ճանապարհը: Միաժամանակ վերջինս հավելել է. «Ասեք՝ ես իմանամ՝ ուր եք գնում, չէ շարասյունով չեք կարող քաղաքով ման գալ, քաղաքում կանգնել չկա, եթե կանգնում եք, ուրեմն մենք տրակտորով կփակենք»: Վերջինս մոտ 5-10 անգամ կրկնել է՝ «Կանգնել չկա» /տե՛ս VN850024 ձայնագրության 03:08-03:16 հատվածը/:

Մոտ 1 ժամ անց տրակտորը տեղից շարժվել է, եւ դեպի Վանաձոր ճանապարհը բացվել

Փաստեր, որոնց վրա հիմնվում է սույն հաղորդումը

1. 2011 թվականի փետրվարի 15-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Գյումրիից Վանաձոր ճանապարհի Ջաջուռ գյուղի մոտ բողոքի ակցիային մասնակցող վարորդների *ազատ տեղաշարժը սահմանափակվել է մոտ 2 ժամ:*

2. 2011 թվականի փետրվարի 15-ին ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել եւ սահմանափակել են *հանրահավաքին մասնակցել ցանկացող գյումրեցի վարորդների իրավունքի իրացմանը:*

3. 2011 թվականի փետրվարի 15-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Գյումրիից Վանաձոր ճանապարհի Ջաջուռ գյուղի մոտ *մեքենաների տեղաշարժը դադարեցվել է* ոչ միայն ճանապարհային ոստիկանության, այլ նաեւ *ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատկիցների մասնակցությամբ:*

4. Ոստիկանության աշխատակիցները կանգնեցրել են մեքենաների ընթացքը, սակայն իրենք *չեն ներկայացել եւ չեն ներկայացրել ճանապարհը փակելու եւ տեղաշարժը խոչընդոտելու պատճառները:*

5. Լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ *Լեւոն Բարսեղյանը զանգահարել է ոստիկանության թեժ գիծ 54 69 12 հեռախոսահամարով եւ ներկայացրել է հաղորդում՝ ազատ տեղաշարժը սահմանափակելու փաստի առթիվ:*

6. Ժամը 17:30-ի սահմաններում Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ մինչեւ Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկ, մոտ 1 կմ հատվածում, հավաքվել են ճանապարհային ոստիկանության մոտ 20 աշխատակիցներ իրենց մեքենաներով:

7. Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ մինչեւ Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկ, մոտ 1 կմ հատվածում, զուգահեռ փողոցի երթեւեկելի հատվածի *հենց մեջտեղում կանգնել է տրակտոր եւ փակել ճանապարհը:*

8. Վանաձոր քաղաքի մուտքի մոտ սահմանափակվել է Գյումրիից Վանաձոր շարժվող *վարորդների երթի իրավունքը:*

9. ՀՀ ոստիկանության Լոռու մարզի վարչության *պետ Ա. Համբարյանն արգելել է երթի մասնակից մեքենաներին կանգնել քաղաքում, ավելին՝ սպառնացել, որ կանգ առնելու դեպքում տրակտորով կփակեն ճանապարհը:*

Հաղորդման իրավական հիմնավորումները

1. ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք:

2. «Ժողովներ, Հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային միջոցառումների

անցկացումը լիազոր մարմնի կողմից կարող է արգելվել այն դեպքում, եթե առկա են հավաստի տվյալներ, որ միջոցառման անցկացումն ստեղծում է բռնության անմիջական սպառնալիք կամ իրական վտանգ է սպառնում պետական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարոյականությանը, անձանց կյանքին և առողջությանը, այլոց սահմանադրական իրավունքներին ու ազատություններին կամ անցկացվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ռասայական, ազգային, կրոնական ատելություն բորբոքելու, բռնության, պատերազմ քարոզելու նպատակով կամ կարող է հանգեցնել զանգվածային անկարգությունների կամ էական գույքային վնաս հասցնել պետությանը, համայնքին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: *Այդ տվյալները կարող են համարվել հավաստի, եթե դրանց առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը կամ ազգային անվտանգության ծառայությունը ներկայացրել է պաշտոնական հիմնավորված եզրակացություն:* Նույն կարգով այդ մարմինները եզրակացություն են տալիս այդ հիմքերի վերացման մասին:

3. Նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային միջոցառումն ապօրինի խոչընդոտելու, միջոցառմանը միջամտելու կամ *միջոցառումը դադարեցնելու համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:*

4. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության կողմից իրավունքների ու ազատությունների սահմանափակումները հնարավոր են միայն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում: Ոստիկանության ծառայողները *մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը:*

5. ՀՀ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ժողովներ, հանրահավաքներ, երթեր կամ ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն *խոչընդոտելը կամ դրանց, ինչպես նաև ժողովներին, հանրահավաքներին, երթերին կամ ցույցերին մասնակցելուն բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հարկադրելը՝ պատժվում է տուգանքով՝* նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

6. Նույն օրենսգրքի 375 հոդվածով սահմանվում է, որ «1. Պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ... եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, ...պատժվում են զատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Այսպիսով, ոստիկանության աշխատակիցները, փակելով ճանապարհը, միտումնավոր խոչընդոտել են քաղաքացիների՝ հավաքներին եւ ցույցերին մասնակցելու իրավունքի իրացմանը:

Տվյալ պարագայում, սույն հաղորդման մեջ նշված պաշտոնատար անձանց գործողություններում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածով եւ 375 հոդվածի 1-ին մասով չթույլատրված արարքների կատարման հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածները՝ պահանջում եմ օրենքով սահմանված կարգով ընթացք տալ սույն հաղորդմանը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-182-րդ հոդվածների կարգով տեղեկացնել ընդունված որոշման մասին:

Կից ներկայացնում եմ.

1. Վերը շարադրված փաստերն հավաստող տասը լուսանկար
2. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա.Համբարյանի եւ Աժ պատգամավոր Զարուհի Փստանջյանի, «Ժառանգություն» կուսակցության նախագահ Արմեն Մարտիրոսյանի խոսակցությունների ձայնագրությունները:
3. Կազմակերպության Ե/2011-28 հաղորդման պատճենը:

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց

Հավելված 3.2

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա
59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2011-02/17-33

17.02.2011 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Ա. Հովսեփյանին

պատճենը՝

ՀՀ հատուկ քննչական
ծառայության պետ Ա. Միրզոյանին

ՀԱՂՈՐԴՈՒՄ
(Հանցագործության՝ ազատ տեղաշարժը սահմանափակելու, արգելելու մասին)

Հարգելի պարոն Հովսեփյան,

2011 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 08:00-ից 11:30-ի սահմաններում, Վանաձոր-Երեւան ճանապարհի Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկից մոտ 15 մետր հեռավորության վրա, ճանապարհն ամբողջությամբ վերահսկվել է ոստիկանության կողմից, եւ վրացական պետհամարանիշներով մեքենաներին արգելվում էր գնալ Երեւան:

Դեպքի նկարագրություն

2011 թվականի փետրվարի 17-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները փորձել են Վանաձորից գնալ Երեւան:

Վանաձոր-Երեւան ճանապարհի Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկից մոտ 15 մետր հեռավորության վրա, ճանապարհի աջ եւ ձախ հատվածում կանգնած են եղել «Ճանապարհային ոստկանության» ծառայության երկու ավտոմեքենաներ: Ճանապարհի նույն հատվածում գտնվել են ոստիկանական համազեստով ավելի քան 10 անձինք, ինչես նաեւ ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի պետ Ս. Հ. Ավետիսյանը, ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնի պետի տեղակալ Ս. Այվազյանը, ճանապարհային ոստկանության մայոր Մ. Կամենդատյանը, մոտ մեկ ժամ անց նրանց միացել է նաեւ «Ճանապարհային ոստկանության» ծառայության պետ Մ. Կարապետյանը:

Ոստիկանության աշխատակիցները կանգնեցրել են Վանաձորից գնացող վրացական պետհամարանիշներով մեքենաները, առանց ներկայանալու, վարորդներից պահանջել են փաստաթղթեր, առանց համապատասխան բացատրության հարցրել, թե ուր է գնում վարորդը, եւ եթե վերջինս պատասխանել է՝ Երեւան, արգելել են առաջ շարժվել:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների այն հարցին, թե ինչու են արգելում մեքենաների տեղաշարժը, Մ. Կամենդատյանը, ինչպես նաեւ Ս. Այվազյանը պատասխանել են, որ Սպիտակից այն կողմ ճանապարհը ձյան պատճառով անանցանելի է, եւ անվտանգության ապահովման պատճառով արգելում են մեքենաների շարժը Երեւան: Հենց այդ նույն պահին ոստիկանության աշխատակիցներից մեկը, ճշտելով, որ բեռնատար մեքենան մեկնում է Երեւան, չի արգելել վերջինիս տեղաշարժը: Այն հարցին, թե ինչու է անվտանգությունը վերաբերում միայն վրացական պետհամարանիշներով մեքենաներին, եւ ինչու նույն անվտանգության տեսանկյունից չի արգելվում նաեւ հայկական պետհամարանիշներով մեքենաների տեղաշարժը, նրանք ոչինչ չեն պատասխանել:

Այնուհետեւ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները գնացել են Լոռու մարզի դատախազություն, հանդիպել Լոռու մարզի դատախազի տեղակալ Ս. Առաքելյանին, բանավոր կերպով ներկայացրել են Վանաձոր-Երեւան ճանապարհին տեղի ունեցող իրադարձությունները: Վերջինս պատասխանել է, որ այն բոլոր քաղաքացիները, որոնք տուժել են տեղաշարժը խոչընդոտելու արդյունքում կարող են իրենց իրավունքների պաշտպանության համար դիմել դատարան՝ պահանջելով նաեւ վնասի փոխհատուցում: Վանաձոր-Երեւան ճանապարհին ոստիկանության կողմից իրականացվող գործողությունների օրինաչափության, դրանց միջամտելու կամ այդ ուղղությամբ որեւէ այլ միջոցառում ձեռնարկելու համար Ս. Առաքելյանը խնդրել է ներկայացնել գրավոր հաղորդում՝ կից համապատասխան ապացույցներով:

2011 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկից մոտ 15 մետր հեռավորության վրա, ոստիկանության աշխատակիցները տեղեկացրել են, որ դեպի Երեւան ճանապարհը բաց է:

Փաստեր, որոնց վրա հիմնվում է սույն հաղորդումը

1. Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկից մոտ 15 մետր հեռավորության վրա, ճանապարհն ամբողջությամբ վերահսկվել է ոստիկանության կողմից:
2. Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկից մոտ 15 մետր հեռավորության վրա ոստիկանության աշխատակիցներն առանց ներկայանալու, առանց ներկայացնելու պատճառներն արգելել են քաղաքացիներին գնալ Երեւան:
3. Մ. Կամենդատյանը, ինչպես նաեւ Ս. Այվազյանը բացատրել են, որ Սպիտակից այն կողմ ճանապարհը ձյան պատճառով անանցանելի է, եւ անվտանգության ապահովման պատճառով արգելում են մեքենաների տեղափոխությունը Երեւան:
4. Ճանապարհի նույն հատվածից ոչ վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաներին թույլատրվել է մեկնել Երեւան:

5. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները Լոռու մարզի դատախազի տեղակալ Ս. Առաքելյանին բանավոր կերպով ներկայացրել են Վանաձոր-Երեւան ճանապարհին տեղի ունեցող իրադարձությունները:

Հաղորդման իրավական հիմնավորումները

1. ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության կողմից իրավունքների ու ազատությունների սահմանափակումները հնարավոր են միայն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում: Ոստիկանության ծառայողները ***մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը:***

3. ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածով սահմանվում է, որ «1. Պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, … եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, …պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Այսպիսով, ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են քաղաքացիների ՀՀ Սահմանդրությամբ երաշխավորված ազատ տեղաշարժի իրավունքի իրացմանը:

Տվյալ պարագայում, սույն հաղորդման մեջ նշված պաշտոնատար անձանց գործողություններում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածով եւ 375 հոդվածի 1-ին մասով չթույլատրված արարքի կատարման հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածները՝ պահանջում եմ օրենքով սահմանված կարգով ընթացք տալ սույն հաղորդմանը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-182-րդ հոդվածների կարգով տեղեկացնել ընդունված որոշման մասին:

Կից ներկայացնում եմ.

1. վերը շարադրված փաստերն հավաստող չորս լուսանկար
2. տեսաձայնագրության մեկ սկավառակ:

Կազմակերպության նախագահ Ա. Սաքունց

Հավելված 3.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ք. Գյումրի, Շիրակացի 19 հեռ. 3-35-29

7/12-10 - 560

« 15 » ապրիլի 2011թ.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ՝
Արթուր Ալբերտի Սաքունցին

Ուղարկվում է Ձեր հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը:

Որոշման հետ համաձայն չլինելու դեպքում, կարող եք բողոքարկել վերադասության կարգով:

Առդիր՝ որոշումը « 6 » թերթից:

ՇՄ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՔՆՆԻՉ՝ Հ. Մ. ՔԱՂՑՐԻԿՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
/ Քրեական գործի հարուցումը մերժելու մասին /

« 15 » ապրիլի 2011թ. ք. Գյումրի

Շիրակի մարզի քննչական բաժնի քննիչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Հ. Մ. Քաղցրիկյանս վերանայելով Լևոն Բարսեղյանի և Արթուր Սաքունցի դիմումների և հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2011թ. փետրվարի 24-ին ստացվել են ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ խորհրդի նախագահ Լևոն Ալբերտի Բարսեղյանի դիմումները հասցեագրված ՀՀ Գլխավոր դատախազություն այն մասին, որ 2011թ. փետրվարի 15-ին, 16-ին և 17-ին Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի հատվածում և Գյումրի քաղաքում խոչընդոտվել է վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների մաքսազերծման վերաբերյալ անցկացվող հանրահավաքներին վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների վարորդների մասնակցությունը:

2011թ. փետրվարի 28-ին ստացվել է ՀՀ Գլխավոր դատախազություն ուղարկված Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյալի նախագահ Արթուր Սաքունցի նույնաբովանդակ հաղորդումը:

Դիմումների և հաղորդման վերաբերյալ Շիրակի մարզի քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ խորհրդի նախագահ Լևոն Ալբերտի Բարսեղյանը բացատրություն է տվել, որ ոստիկանության Գյումրու բաժնի աշխատակիցները 2011թ. փետրվարի 8-ին և 10-ին շրջափակել են Գյումրի քաղաքի Պուշկինի փողոց, որտեղ տեղակայված է ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, տանող ճանապարհները՝ արգելելով վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաներին գնալ ակումբի մոտ: Դրանով ոստիկանները խախտել են մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքը: 2011թ. փետրվարի 15-ին՝ ժամը 11.30-ից մինչև 15.30-ը ոստիկանության Շիրակի մարզային վարչության, Գյումրու և Ախուրյանի բաժինների, ճանապարհային ոստիկանության Շիրակի և Արագածոտնի բաժնի աշխատակիցներն անօրինական արգելափակել են Գյումրի-Վանաձոր ավտոժանապարհի Ջաջուռ գյուղի հատվածը: Ոստիկանության աշխատակիցներն իրենց գործողությունները պատճառաբանել են Ջաջուռի լեռնանցքի անանցանելիությամբ: Նշված ճանապարհահատվածում ավտոմեքենաների երթևեկությունը խոչընդոտվել է ոստիկանների կողմից նաև 2011թ. փետրվարի 16-ին: 2011թ. փետրվարի 17-ին՝ ժամը 07.45-ից մինչև 18.02 ոստիկանության Շիրակի մարզային վարչության, Գյումրու և Ախուրյանի բաժինների, ճանապարհային ոստիկանության Շիրակի և Արագածոտնի բաժնի աշխատակիցները ավելի քան 20 ավտոմեքենաներով և 150 աշխատակիցներով փակել են Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցի հարակից նրբանցքները և շրջափակման մեջ են հայտնվել 7 ավտոմեքենաներ, այդ թվում իր ավտոմեքենան: Այդ ընթացքում Սայաթ-Նովա փողոցում ոստիկանության Գյումրու բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ Հայկ Զաքարյանը հայհոյել է Նադեժդա Աղասու Հակոբյանին:

Նույնաբովանդակ բացատրություն է տվել նաև ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ի նախագահ Նադեժդա Աղասու Հակոբյանը, միաձամանակ նշել, որ 2011թ. փետրվարի 15-ին վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների հետ իր ավտոմեքենայով Գյումրի քաղաքից ուղևորվել է քաղաք Վանաձոր, սակայն Ջաջուռի լեռնանցքի ձնաբքի պատճառով չի կարողացել անցնել լեռնանցքը և հետ է վերադարձել: Նշել է, որ 2011թ. փետրվարի 17-ին Գյումրու Սայաթ-Նովա փողոցում ոստիկանության Գյումրու բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ Հայկ Զաքարյանը հայհոյել է իրեն:

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Արթուր Ալբերտի Սաքունցը բացատրություն է տվել, որ 2011թ. փետրվարի 15-ին և 16-ին ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակիցներն ապօրինի փակել են Վանաձոր-Գյումրի ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի հատվածը և խոչընդոտել վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաներին անցկացնել երթ և հանրահավաք:

Ոստիկանության Գյումրու բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Արթուր Գևորգի Բիչախչյանը բացատրություն է տվել այն մասին, որ ոստիկանության Գյումրու բաժնի աշխատակիցները համագործակցելով ճանապարհային ոստիկանության հետ մշտապես կարգավորել են տրանսպորտային միջոցների երթևեկությունը, իրականացրել են հասարակական կարգի պահպանություն Գյումրի քաղաքի տարբեր փողոցներում և թաղամասերում, այդ թվում Պուշկինի, Մուսայելյան, Գորկու, Սպանդարյան փողոցներում: Գյումրի քաղաքի Պուշկինի փողոցում է գտնվում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, որը հավաքատեղի է հանդիսացել վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների համար: 2011թ. փետրվարի սկզբերին ոստիկանության Գյումրու բաժնում տեղեկություններ են ստացվել այն մասին, որ վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների պատճառով Գյումրի քաղաքի Տերյան, Պուշկինի, Գորկու փողոցներում խոչընդոտվել է քաղաքացիների անարգել տեղաշարժը: Նույն ժամանակ Պուշկինի փողոցը եղել է սառցակալված, որի պատճառով ոստիկանության աշխատակիցները կարգավորել են վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների կայանումը, կանոնավոր երթևեկությունը՝ ճանապարհատրանսպորտային պատահարներից և խցանումներից խուսափելու համար: 2011թ. փետրվարին՝ մասնավորապես փետրվարի 10-ին ոստիկանության Գյումրու բաժնի աշխատակիցները Լևոն Բարսեղյան անվամբ քաղաքացուց որևէ դիմում, բողոք կամ հայտարարություն չեն ստացել: 2011թ. փետրվարի 17-ին՝ ժամը 08.00-ի սահմաններում ոստիկանության Գյումրու բաժնում տվյալներ են ստացվել այն մասին, որ Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցում տեղի է ունենալու հանրահավաք սոցիալական խնդիրների վերաբերյալ: Նույն ժամանակ ոստիկանության Գյումրու բաժնի աշխատակիցները գնացել են Սայաթ-Նովա փողոց՝ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և այլ օրենքներով իրենց վրա դրված պարտականությունները կատարելու, մասնավորապես հասարակական կարգի պահպանություն իրականացնելու: Սայաթ-Նովա փողոցում գտնվող Վ. Աճեմյանի անվան թատրոնի մոտ կայանված են եղել մետ 10 ավտոմեքենաներ՝ իրենց վարորդների և ուղևորների հետ միասին: Հավաքված քաղաքացիների խոսակցություններից պարզ է դարձել, որ նրանք ցանկանում են անցկացնել հանրահավաք և երթ՝ վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների մաքսազերծման հետ կապված հարցերի վերաբերյալ: Հավաքված մոտ 35-ից 40 քաղաքացիները, նստելով իրենց ավտոմեքենաները, դուրս են եկել Սայաթ-Նովա փողոցի երթևեկելի մաս և շարասյունով երթևեկել դեպի Խաղաղության օղակ: Հասնելով Սայաթ-Նեվա և Ռուսթավելի փողոցի խաչմերուկ ավտոմեքենաները կանգնել են, որոնց վարորդները և ուղևորները, իջնելով ավտոմեքենաներից սկսել են փողոցի երթևեկելի մասում կանգնած միմյանց հետ զրուցել: Նույն ժամանակ մեկ այլ ավտոմեքենան հանդիպակաց եկել և զուգահեռ կանգնել է շարասյանը: Սայաթ-Նովա փողոցում խցանում է առաջացել, իսկ հավաքված քաղաքացիները սկսել են անցկացնել հանրահավաք: Հավաքված քաղաքացիների պատճառով Սայաթ-Նովա փողոցը դարձել է անանցանելի տրանսպորտային միջոցների համար, որի պատճառով ոստիկանության աշխատակիցները շեղել են տրանսպորտային միջոցների հոսքը դեպի Սայաթ-Նովա փողոց՝ մինչև հանրահավաքն ավարտվելը: Որևէ քաղաքացու կամ տրանսպորտային միջոցի ազատ տեղաշարժվելու իրավունք չի խոչընդոտվել, ոստիկանության աշխատակիցները կատարել են միայն հասարակական կարգի պահպանություն և կարգավորել են երթևեկությունը: Ոստիկանության Գյումրու բաժնի աշխատակիցները Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի մոտ ծառայություն չեն կատարել:

Նույնաբովանդակ բացատրություններ են տվել նաև ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հարություն Հեգելի Ավետիսյանը, ոստիկանության Գյումրու բաժնի պետի տեղակալներ, ոստիկանության փոխգնդապետ Խաչատուր Հակոբի Գնթունին, ոստիկանության գնդապետ Համլետ Վլադիմիրի Կիրակոսյանը, նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ, ոստիկանության մայոր Արսեն Ռուդոլֆի Սարգսյանը, պրոֆիլակտիկայի բաժանմունքի տեղամասային տեսուչներ, ոստիկանության ավագ լեյտենանտներ Ստեփան Շաքրոյի Ավետիսյանը, Արմեն Մարտիրոսի Մարմարյանը, ոստիկանության մայոր Մամիկոն Ռոբերտի Սիմոնյանը, ոստիկանության լեյտենանտ Զաքար Լևոնի Մկրտչյանը, ոստիկանության Գյումրու բաժնի 2-րդ բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր Արամ Ալեքսանի Ղարիբյանը, նույն բաժանմունքի օպեր-լիազոր, ոստիկանության ավագ լեյտենանտ Մկրտիչ Գևորգի Ռեմրշատյանը, ոստիկանության Գյումրու բաժնի 1-ին բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ

Հարություն Վլադիմիրի Աղամյանը, նույն բաժանմունքի պրոֆիլակտիկայի խմբի ավագ տեղամասային տեսուչ, ոստիկանության մայոր Ավետիք Բագրատի Մարգարյանը, ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ վաշտի հրամանատարի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Սուքիաս Տելմանի Գրիգորյանը, նույն վաշտի 2-րդ դասակի հրամանատար, ոստիկանության մայոր Գևորգ Սարգսի Դավթյանը, նույն դասակի ավագ տեսուչներ, ոստիկանության մայորներ Վառշավիր Աղասու Գրիգորյանը, Ավետիք Ալբերտի վարդանյանը, ավագ լեյտենանտ Էռնեստ Ֆելիքսի Խաչատրյանը, ոստիկանության Գյումրու բաժնի ՊՊԾ վաշտի հրամանատարի տեղակալ, ոստիկանության մայոր Արթուր Ալբերտի Բաբաջանյանը, միաժամանակ նշել են, որ 2011թ. փետրվարի 8-ին 10-ին և 17-ին Գյումրի քաղաքի տարբեր փողոցներում և Սայաթ-Նովա փողոցում ոստիկանության աշխատակիցները կատարել են միայն հասարակական կարգի պահպանություն և կարգավորել են երթևեկությունը, որևէ քաղաքացու ազատ տեղաշարժվելու իրավունք չի խախտվել, հայհոյանքներ չի եղել:

Նույնաբովանդակ բացատրություն է տվել անչափահասների գործերով բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հայկ Խոսրովի Զաքարյանը և միաժամանակ նշել, որ ինքը որևէ քաղաքացու չի հայհոյել: 2011թ. փետրվարի 8-ին 10-ին և 17-ին Գյումրի քաղաքի տարբեր փողոցներում և Սայաթ-Նովա փողոցում ոստիկանության աշխատակիցները կատարել են միայն հասարակական կարգի պահպանություն և կարգավորել են երթևեկությունը, որևէ քաղաքացու ազատ տեղաշարժվելու իրավունք չի խախտվել:

Նույնաբովանդակ բացատրություն է տվել ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Գևորգ Սայաթի Թադևոսյանը, միաժամանակ նշել, որ 2011թ. փետրվարի 17-ին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցում տեղի ունեցող հանրահավաքի ժամանակ Սայաթ-Նովա փողոց է եկել իրեն անծանոթ քաղաքացուհի, որն անկանոն վարել է սպիտակ գույնի ավտոմեքենան: Ինքը ավտոմեքենայի վրայից վերցրել է բանալիները, որոնք քիչ անց վերադարձերել է նշված կնոջը: 2011թ. փետրվարի 15-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում ոստիկանության Ախուրյանի բաժնում տեղեկություններ են ստացվել այն մասին, որ ձնաբքի պատճառով փակվել է Գյումրի Վանաձոր ավտոճանապարհի Զաջուռ գյուղի հատվածը և դարձել անանցանելի տրանսպորտային միջոցների համար: Ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակիցները ճանապարհային ոստիկանության հետ միասին մեկնել են Զաջուռ գյուղի մետ՝ երթևեկությունը կարգավորելու նպատակով: Ինքն անձամբ գնացել է նշված վայրը՝ իրադրությանը ծանոթանալու: Ոստիկանության աշխատակիցները, ճանապարհատրանսպորտային պատահարներից և հնարավոր խցանումներից խուսափելու նպատակով, արգելել են դեպի Վանաձոր ընթացող ավտոմեքենաներին երթևեկել Զաջուռի լեռնանցքով մինչև նույն օրը՝ ժամը 14.00-ի սահմանները՝ ձնաբուքը դադարելը: Այդ ընթացքում արգելվել է ոչ միայն վրացական այլ նաև հայկական պետհամարանիշներով ավտոմեքենաների երթևեկությունը Զաջուռի լեռնանցքով:

Նույնաբովանդակ բացատրություն է տվել ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի, 2-րդ վաշտի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ Արմեն Կարապետի Կարապետյանը միաժամանակ նշել, որ 2011թ. փետրվարի 15-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում ոստիկանության Ախուրյանի բաժնում տեղեկություններ են ստացվել ճանապարհային ոստիկանութուն այն մասին, որ ձնաբքի պատճառով փակվել է Գյումրի Վանաձոր ավտոճանապարհի Զաջուռ գյուղի հատվածը և դարձել անանցանելի տրանսպորտային միջոցների համար: Ինքը ճանապարհային ոստիկանության աշխատակիցների և ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակիցների հետ միասին մեկնել է Զաջուռ գյուղի մետ՝ երթևեկությունը կարգավորելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցները, հնարավոր վթարներից և խցանումներից խուսափելու նպատակով, արգելել են դեպի Վանաձոր ընթացող ավտոմեքենաներին երթևեկել Զաջուռի լեռնանցքով մինչև նույն օրը՝ ժամը 14.30-ի սահմանները՝ ձնաբուքը դադարելը: Այդ ընթացքում արգելվել է ոչ միայն վրացական այլ նաև հայկական պետհամարանիշներով ավտոմեքենաների երթևեկությունը Զաջուռի լեռնանցքով: 2011թ. փետրվարի 16-ին՝ ժամը 11.30-ի սահմաններում, ոստիկանության Ախուրյանի բաժնից տեղեկանալով Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհի Զաջուռ գյուղի հատվածում առաջացած խցանման մասին, ճանապարհային ոստիկանության աշխատակիցները ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակիցների հետ գնացել են նշված ճանապարհահատված և կարգավորել են երթևեկությունը: Շիրակի մարզի Զաջուռ գյուղի մոտ և Գյումրի քաղաքում ոստիկանության աշխատակիցները կատարել են միայն հասարակական կարգի

պահպանություն, երթևեկության կարգավորում, որևէ քաղաքացու ազատ տեղաշարժվելու իրավունք չի խախտվել:

Ոստիկանության Ախուրյանի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վահրամ Խաչատուրի Ենգոյանը բացատրություն է տվել այն մասին, որ 2011թ. փետրվարի 15-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում ոստիկանության Ախուրյանի բաժնում Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի տեղամասային տեսուչ Աշոտ Շիրակի Ղազարյանից տեղեկություններ են ստացվել այն մասին, որ ձնաբքի պատճառով փակվել է Գյումրի Վանաձոր ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի հատվածը և դարձել անանցանելի տրանսպորտային միջոցների համար: Ինքը ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակիցների և ճանապարհային ոստիկանության աշխատակիցների հետ միասին մեկնել են Ջաջուռ գյուղի մետ՝ երթևեկությունը կարգավորելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցները, ճանապարհատրանսպորտային պատահարներից և հնարավոր խցանումներից խուսափելու նպատակով, արգելել են դեպի Վանաձոր ընթացող ավտոմեքենաներին երթևեկել Ջաջուռի լեռնանցքով մինչև նույն օրը՝ ժամը 14.30-ի սահմանները՝ ձնաբուքը դադարելը: Որևէ քաղաքացու երթերի, ցույցերի և հանրահավաքների մասնակցելու իրավունք չի խոչընդոտվել: Այդ ընթացքում արգելվել է ոչ միայն վրացական այլ նաև հայկական պետհամարանիշներով ավտոմեքենաների երթևեկությունը Ջաջուռի լեռնանցքով: 2011թ. փետրվարի 16-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում ոստիկանության Ախուրյանի բաժնում տվյալներ են ստացվել այն մասին, որ Գյումրի Վանաձոր ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի հատվածում ավտոմեքենաների խցանում է առաջացել: Նույն բաժնի աշխատակիցները ճանապարհային ոստիկանության աշխատակիցների հետ միասին մեկնել են Ջաջուռ գյուղի մոտ երթևեկությունը կարգավորելու: Առաջացած խցանումը կարգավորվել է ոստիկանության աշխատակիցների կողմից և յուրաքանչյուր ավտոմեքենա մեկնել է իր ցանկացած ուղղությամբ:

Նույնաբովանդակ բացատրություններ են տվել նաև ոստիկանության Ախուրյանի բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Յուրի Ռուբենի Գալուստյանը, նույն բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի տեղամասային տեսուչներ, ոստիկանության կապիտաններ Գևորգ Միշայի Գինոսյանը, Աշոտ Շիրակի Ղազարյանը, ճանապարհային ոստիկանության 2-րդ գումարտակի 2-րդ վաշտի 2-րդ դասակի տեսուչներ, ոստիկանության ավագ լեյտենանտներ Ջիվան Ռաֆիկի Սարգսյանը, Ահարոն Իգանորի Հայրապետյանը միաժամանակ նշել են, որ 2011թ. փետրվարի 15-ին և 16-ին Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի մոտ ոստիկանները կարգավորել են երթևեկությունը, նախականխել են հնարավոր ճանապարհատրանսպորտային պատահարները և խցանումները:

Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի գյուղապետ Սոկրատ Հրաչի Սուվարյանը բացատրություն է տվել, որ 2011թ. փետրվարի 15-ին՝ ժամը 10.30-ի սահմաններում տեղեկացել է, որ Գյումրի Վանաձոր ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի հատվածը առատ ձան և ձնաբքի պատճառով դարձել է անանցանելի տրանսպորտային միջոցների համար: Գնացել է նշված ճանապարհահատված և տեսել, որ ոստիկանության աշխատակիցները մինչև կեսօր թույլ չեն տվել ավտոմեքենաներին մտնել ձնաբքի մեջ՝ դրանով իսկ կանխել են հնարավոր վթարները և խցանումները: 2011թ. փետրվարի 16-ին Ջաջուռ գյուղի մոտ առաջացել է ավտոմեքենաների խցանում, սակայն ոստիկանության աշխատակիցների միջամտությամբ երթևեկությունը կարգավորվել է:

«ՑԱՅԳ» հեռուստաընկերության լրագրող Արշակ Տիգրանի Ադամյանը բացատրություն է տվել, որ 2011թ. փետրվարի 15-ին՝ ժամը 11.00-ից մինչև 15.00-ի սահմանները եղել է Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի հատվածում, որտեղ ձյուն է տեղացել և քամի է եղել: Ոստիկանության աշխատակիցներն այդ ընթացքում արգելել են ավտոմեքենաներին անցնել Ջաջուռի լեռնանցքը՝ ձնաբքի և ճանապարհի անանցանելիության պատճառով: 2011թ. փետրվարի 17-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում գնացել է Գյումրու Սայաթ-Նովա փողոց՝ վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների սեփականատերերի բողոքի ակցիան լուսաբանելու: Սայաթ-Նովա փողոցի երթևեկելի մասում կայանված են եղել մոտ ութ ավտոմեքենաներ, որոնց շուրջ հավաքված մարդիկ անցկացրել են բողոքի ակցիա: Այդ ընթացքում ոստիկանության աշխատակիցները փակել են Սայաթ-Նովա փողոցի սկզբնամասը և վերջնամասը և շեղել են ավտամեքենաների հոսքը դեպի Սայաթ-Նովա փողոց: Այդ ընթացքում ոստիկանության աշխատակիցները կատարել են հասարակական կարգի պահպանություն, որևէ քաղաքացի չի շրջափակվել և յուրաքանչյուր քաղաքացի կարող էր գնալ ուր որ կամենար:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի Գյումրու մասնաճյուղի կառավարիչ Հարություն Ալեքսանի Թումասյանը բացատրություն է տվել, որ 2011թ. փետրվարին աշխատանքային օրերին՝ ժամը 10.00-ից 17.30-ը եղել է Գյումրի քաղաքի Գորկու 78 հասցեում գտնվող «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում: Այդ ընթացքում բանկի շրջակայքում որևէ ավտոճանապարհ չի փակվել, բանկի աշխատանքը չի խոչընդոտվել, իսկ ինքն իր ավտոմեքենայով մշտապես երթևեկել է բանկի հարակից փողոցներով և որևէ խոչընդոտի չի հանդիպել:

Նույնաբովանդակ բացատրություն է տվել նաև «Անտիկա» խանութի տնօրեն Կարեն Ռաֆիկի Քարտաշյանը:

Այսպիսով՝ նյութերի նախապատրաստման ընթացքում հիմնավորվել է, որ 2011թ. փետրվարի 8-ին ոստիկանության Գյումրու բաժնում տեղեկություններ են ստացվել այն մասին, որ վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների պատճառով, որոնք հավաքվում են Պուշկինի փողոցում գտնվող ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի մետ, Գյումրի քաղաքի Տերյան, Պուշկինի, Գորկու փողոցներում խոչընդոտվել է քաղաքացիների անարգել տեղաշարժը: Նույն ժամանակ Պուշկինի փողոցը եղել է սառցակալված, որի պատճառով ոստիկանության աշխատակիցները կարգավորել են վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների կայանումը, կանոնավոր երթևեկությունը՝ ճանապարհատրանսպորտային պատահարներից և խցանումներից խուսափելու համար: 2011թ. փետրվարին՝ մասնավորապես փետրվարի 10-ին ոստիկանության Գյումրու բաժնի աշխատակիցները Լևոն Բարսեղյան անվամբ քաղաքացուց որևէ դիմում, բողոք կամ հայտարարություն չեն ստացել: 2011թ. փետրվարի 15-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում ոստիկանության Ախուրյանի բաժնում Շիրակի մարզի Ջաջուռ գյուղի տեղամասային տեսուչ Աշոտ Շիրակի Ղազարյանից տեղեկություններ են ստացվել այն մասին, որ ձնաբքի պատճառով փակվել է Գյումրի Վանաձոր ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի հատվածը և դարձել անանցանելի տրանսպորտային միջոցների համար: Ոստիկանության Ախուրյանի բաժնի աշխատակիցները ճանապարհային ոստիկանության աշխատակիցների հետ միասին մեկնել են Ջաջուռ գյուղի մետ՝ երթևեկությունը կարգավորելու նպատակով: Ոստիկանության աշխատակիցները, ճանապարհատրանսպորտային պատահարներից և հնարավոր խցանումներից խուսափելու նպատակով, արգելել են դեպի Վանաձոր ընթացող ավտոմեքենաներին երթևեկել Ջաջուռի լեռնանցքով մինչև նույն օրը՝ ժամը 14.30-ի սահմանները՝ ձնաբուքը դադարելը: 2011թ. փետրվարի 16-ին՝ ժամը 11.00-ի սահմաններում ոստիկանության Ախուրյանի բաժնում տվյալներ են ստացվել այն մասին, որ Գյումրի Վանաձոր ավտոճանապարհի Ջաջուռ գյուղի հատվածում ավտոմեքենաների խցանում է առաջացել: Նույն բաժնի աշխատակիցները ճանապարհային ոստիկանության աշխատակիցների հետ միասին մեկնել են Ջաջուռ գյուղի մոտ երթևեկությունը կարգավորելու: Առաջացած խցանումը կարգավորվել է ոստիկանության աշխատակիցների կողմից և յուրաքանչյուր ավտոմեքենա մեկնել է իր ցանկացած ուղղությամբ: Ոստիկանության աշխատակիցների գործողությունները եղել են օրինաչափ և ուղղված են եղել անխափան երթևեկության ապահովմանը, ճանապարհատրանսպորտային պատահարների և խցանումների կանխմանը: 2011թ. փետրվարի 17-ին՝ ժամը 08.00-ի սահմաններում ոստիկանության Գյումրու բաժնում տվյալներ են ստացվել այն մասին, որ Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցում տեղի է ունենալու հանրահավաք սոցիալական խնդիրների վերաբերյալ: Նույն ժամանակ ոստիկանության Գյումրու բաժնի աշխատակիցները գնացել են Սայաթ-Նովա փողոց՝ հասարակական կարգի պահպանություն իրականացնելու: Սայաթ-Նովա փողոցում անցկացվել է հանրահավաք վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների մաքսազերծման խնդիրների վերաբերյալ: Հանրահավաքի մասնակից մոտ 120 քաղաքացիները կանգնած են եղել Սայաթ-Նովա փողոցի երթևեկելի մասում, որի պատճառով փողոցը դարձել է անանցանելի տրանսպորտային միջոցների համար: Ոստիկանության աշխատակիցները շեղել են տրանսպորտային միջոցների հոսքը դեպի Սայաթ-Նովա փողոց՝ մինչև հանրահավաքն ավարտվելը: Որևէ քաղաքացու կամ տրանսպորտային միջոցի ազատ տեղաշարժվելու իրավունք չի խախտվել, ոստիկանության աշխատակիցները կատարել են միայն հասարակական կարգի պահպանություն և կարգավորել են երթևեկությունը: Ոստիկանության աշխատակիցները կատարել են օրենսդրությամբ, մասնավորապես «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջներով իրենց վրա դրված պարտականությունները, այսինքն՝ ոստիկանության աշխատակիցների գործողություններում բացակայում է ՀՀ քրեական

օրենսգրքի որևէ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 181, 185 հոդվածներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Լևոն Բարսեղյանի և Արթուր Սաքունցի դիմումների և հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժել՝ ոստիկանության աշխատակիցների արարքներում հանցակազմի բացակայության պատճառով:

2.Որոշման մեկ օրինակը նյութերի հետ միասին ուղարկել Շիրակի մարզի դատախազին՝ մերժման օրինականությունն ստուգելու համար:

3.Որոշման մեկ օրինակն ուղարկել ոստիկանության Գյումրու և Ախուրյանի բաժիններ՝ Ի գիտություն:

3.Որոշման մասին հայտնել կողմերին, համաձայն չլինելու դեպքում բացատրել բողոքարկման կարգը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՔՆՆԻՉ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏ՝ Հ.Մ. ՔԱՂՑՐԻԿՅԱՆ

«ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ»
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ
ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ Կ.Թ.ԹՈՎՄԱՍՅԱՆ

Հավելված 4

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2011 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2011-28.04/95
28.04.2011թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Մանուկ Վարդանյանին

Պատճենը՝

Լոռու մարզպետ
Արամ Քոչարյանին

Հայտարարություն

2011 թ. ապրիլի 28-ին՝ առավոտյան ժամը 08:00-12:30-ի սահմաններում, Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումները դադարեցված են: Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային տաքսիներ, որոնք սովորաբար օրվա ցանկացած ժամի Վանաձորի ավտոկայանից իրականացնում են ուղևորափոխադրումներ, ավտոկայանում չկան:

Վանաձոր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության ոչ մի ներկայացուցիչ տեղում չէ, և փաստացի Երևան մեկնող քաղաքացիներին որևէ կերպ բացատրություն չի տրվում, թե ինչու է դադարեցված դեպի Երևան ուղևորափոխադրումը: Ավելին, նախապես որևէ հայտարարություն չի տարածվել այն մասին, որ ապրիլի 28-ին դեպի Երևան ուղևորափոխադրումը դադարեցվելու է:

Լոռու մարզի Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ և Տաշիր քաղաքներից մեր կազմակերպության տեղական ներկայացուցիչները տեղեկացրել են, որ դեպի Երևան ուղևորափոխադրումներ չի իրականացվում նաև այդ քաղաքներից:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսներին մամուլի կողմից տարածված տեղեկությունների համաձայն՝ դեպի Երևան ուղևորափոխադրումները դադարեցվել են այն բոլոր օրերին, երբ ՀՀ ազգային կոնգրեսը Երևանում կազմակերպել է հանրահավաք:

Այդ դեպքերում ևս որևէ հայտարարություն չի տարածվել, թե ինչու է դադարեցված ուղևորափոխադրումը, և փաստացի քաղաքացիների ազատ տեղաշարժի սահմանափակումների վերաբերյալ բացատրություն չի տրվել:

Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման փաստերը տարածվել են զանգվածային լրատվության միջոցների կողմից, իշխանությունները որևէ միջոցառում չեն ձեռնարկել ուղևորափոխադրումների նշված սահմանափակումները վերացնելու և նման սահմանափակումների դրսևորումները կանխարգելելու համար:

Նշված փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ ուղևորափոխադրումները կանոնավոր կերպով կազմակերպելու համար պատասխանատու անձինք ոչ միայն

խախտել են ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքը, այլև դրսևորել են անգործություն խախտումները կանխարգելելու ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ պահանջում եմ դադարեցնել՝

1. Վանաձոր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները
2. Ալավերդի-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները
3. Ստեփանավան-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները
4. Սպիտակ-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները
5. Տաշիր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները:

Կից ներկայացնում եմ 2011 թ. ապրիլի 28-ին Վանաձորի ավտոկայանում ստեղծված վիճակը պատկերող ֆոտոները:

Հարգանքներով

Կազմակերպության նախագահ՝ Ա. Սաքունց

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

2011 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2011-31.05/726
31.05.2011թ.

ՀՀ վարչապետ

Տիգրան Սարգսյանին

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ

(ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և Լոռու մարզպետի անգործությունը վերացնել և պարտավորեցնել 28.04.2011 թ. կազմակերպության ներկայացրած հայտարարության վերաբերյալ համապատասխան միջոցներ ձեռնարկելուն)

Հարգելի պարոն Սարգսյան

Ձեզ եմ դիմում՝ իրացնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածներով երաշխավորված իմ իրավունքը:

1.Փաստեր, որոնց վրա հիմնված է հայցապահանջը

2011 թ. ապրիլի 28-ին՝ առավոտյան ժամը 08:00-12:30-ի սահմաններում, Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումները դադարեցված են: Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային տաքսիները, որոնք սովորաբար օրվա ցանկացած ժամի Վանաձորի ավտոկայանից իրականացնում են ուղևորափոխադրումներ, ավտոկայանում չէին:

Վանաձոր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության ոչ մի ներկայացուցիչ տեղում չէր, և փաստացի Երևան մեկնող քաղաքացիներին որևէ կերպ բացատրություն չէր տրվում, թե ինչու է դադարեցված դեպի Երևան ուղևորափոխադրումը: Ավելին, նախապես որևէ հայտարարություն չէր տարածվել այն մասին, որ ապրիլի 28-ին դեպի Երևան ուղևորափոխադրումը դադարեցվելու է:

Մեր կազմակերպության Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ և Տաշիր քաղաքների ներկայացուցիչները տեղեկացրել են, որ դեպի Երևան ուղևորափոխադրումներ չի իրականացվել նաև այդ քաղաքներից:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսներին մամուլի կողմից տարածված տեղեկությունների համաձայն՝ դեպի Երևան ուղևորափոխադրումները դադարեցվել են այն բոլոր օրերին, երբ ՀՀ ազգային կոնգրեսը Երևանում կազմակերպել է հանրահավաք:

Այդ դեպքերում ևս որևէ հայտարարություն չի տարածվել, թե ինչու է դադարեցված ուղևորափոխադրումը, և՝փաստացի քաղաքացիների ազատ տեղաշարժի սահմանափակումների վերաբերյալ բացատրություն չի տրվել:

Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման փաստերը տարածվել են զանգվածային լրատվության միջոցների կողմից,

իշխանությունները որևէ միջոցառում չեն ձեռնարկել ուղևորափոխադրումների նշված սահմանափակումները վերացնելու և նման սահմանափակումների դրսևորումները կանխարգելելու համար:

Վերը նշված հանգամանքների վերաբերյալ կազմակերպությունը 2011 թ. ապրիլի 28-ին ներկայացրել է հայտարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ինչպես նաև Լոռու մարզպետարան՝ պահանջելով դադարեցնել

1. Վանաձոր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները
2. Ալավերդի-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները
3. Ստեփանավան-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները
4. Սպիտակ-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները
5. Տաշիր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպության լիազորությունները:

Մինչ օրս ներկայացված հայտարարությունների վերաբերյալ կազմակերպությունը չի ստացել համապատասխան պատասխան գրություններ՝ ավելին 2011 թ. մայիսի 31-ին՝ առավոտյան ժամը 08:00-12:50-ի սահմաններում, Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումները դադարեցված են եղել: Վանաձոր-Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային տաքսիները, որոնք սովորաբար օրվա ցանկացած ժամի Վանաձորի ավտոկայանից իրականացնում են ուղևորափոխադրումներ, ավտոկայանում չեն եղել:

2.Բողոքի պահանջի իրավական հիմնավորում

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, այնուհանդերձ ներկայացնում եմ հետևյալ հիմնավորումները:

Լոռու մարզպետարանը և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ներկայացված 28.04.2011 թ. հայտարարությունը անհետևանք թողնելով, խախտել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 46-րդ և 59-րդ հոդվածները, որը իր հերթին բերել է 2011 թ. մայիս 31-ին Վանաձոր քաղաքի բնակիչների ազատ տեղաշարժման իրավունքի խախտման:

Նշված փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ ուղևորափոխադրումները կանոնավոր կերպով կազմակերպելու համար պատասխանատու անձինք ոչ միայն խախտել են ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքը, այլև դրսևորել են անգործություն խախտումները կանխարգելելու ուղղությամբ:

Այսպես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը»:

Նույն օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է:……»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, …..:»

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև՝ օրենքով սահմանված այլ եղանակներով»:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վարչական մարմինը վարչական վարույթը պետք է հարուցի դիմումը ստանալու պահից և վարչական վարույթով պետք է որոշում կայացնի 30 օրյա ժամկետում, որն էլ 3 օրյա ժամկետում պետք է ներկայացնի կողմերին:

Կազմակերպության կողմից հայտարարությունը ներկայացվել է 28.04.2011 թ., որի կապակցությամբ մինչ օրս չի տրվել որեւիցե պատասխան:

Լոռու մարզպետարանի և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ցուցաբերած անգործության հետևանքով 2011 թ. մայիսի 31-ին Վանաձոր-Երևան երթուղին սպասարկող կազմակերպությունը դրսեւորել է նույնատիպ խախտում, որը հանգեցրել է ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի խախտմանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 31-րդ, 69-րդ հոդվածները և 70-րդ հոդվածի 2-րդ մասի բ. կետը՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Վերացնել Լոռու մարզպետարանի և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության անգործությունը և պարտավորեցնել 28.04.2011 թ. հայտարարության հիման վրա հարուցել վարչական վարույթ:

Կից ներկայացնում եմ՝

1. 2011 թ. մայիսի 31-ին Վանաձորի ավտոկայանում ստեղծված վիճակը պատկերող ֆոտոները էլեկտրոնային կրիչով
2. 2011 թ. մայիսի 31-ին Վանաձորի ավտոկայանում կատարված տեսաձայնագրությունը էլեկտրոնային կրիչով
3. 2011 թ. ապրիլի 28-ին Լոռու մարզպետին և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հասցեագրված հայտարարության պատճենը:

Հարգանքներով

Կազմակերպության նախագահ՝ Ա. Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
Էլ. փոստ azalyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

375010, Երևան-10, Նալբանդյան 28
Հեռախոս 59-01-44 Ֆաքս (374 10) 52-66-88

№ 17/17.1/5000-11

«16» 06 2011թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ *կազմակերպության*
***նախագահ պրն.* Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ**

Հարգելի պարոն Սաքունց

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին հասցեագրած Ձեր 28.04.2011թ թիվ Ե/2011-28.04175 և 31.05.2011թ Ե/2011-31.05/126 գրությունների վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ տրանսպորտային տեսչության Լոռու տարածքային բաժնի կողմից կատարված վերահսկողական գործառույթների արդյունքում պարզվել է՝ Ձեր կողմից նշված փաստերը իրականությանը համապատասխանում են մասնակիորեն: Այսպես, 2011թ ապրիլի 28-ին ուղևորահոսքի կտրուկ աճի պատճառով մատնանշված երթուղիները սպասարկող կազմակերպությունները ուղևորների կողմից գործադրած ճնշման պատճառով ստիպված աշխատել են չվացուցակների խախտումներով և 7 ^{00} –ից 9 ^{00} ընկած ժամանակահատվածում կատարել են մինչև ժամը 13.^{00}-ը նախատեսված բոլոր չվերթները:

Երթուղիների սպասարկումը տվյալ օրը կարգավորվել է միայն ժամը 13^{00} –ից հետո:

Հարկ եմ համարում նշել, որ գործող կարգի համաձայն կանոնավոր ուղևորափոխադրման երթուղիների չվացուցակները և սպասարկող տրանսպորտային միջոցների քանակները նախատեսված են ուղևորահոսքի բնականոն պայմանների համար: Ընդ որում փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին

արգելվում է մրցույթով չամրագրված ավտոբուսների շահագործումը առաջացնում է վարչական պատասխանատվություն, համաձայն <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի (հոդված 137 [2]):

Հիմք ընդունելով <Ավտոմոբիլային տրանսպորտի մասին> ՀՀ օրենքը, <Կանոնավոր ուղևորափոխադրումների վերաբերյալ> ՀՀ կառավարության թիվ 762 որոշումը, ինչպես նաև ՀՀ տրանսպորտային տեսչության Լոռու տարածքային բաժնի կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքները՝ <ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի խախտման> և <Երթուղիները սպասարկող կազմակերպությունների լիազորությունները դադարեցնելու> վերաբերյալ Ձեր պահանջները հիմնավորված չեն:

Պետ՝ Ա. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Կատ.Ռ. Նավոյան

Հեռ.59-01-32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28
Հեռ. (374 10) 59 00 05, Ֆաքս (374 10) 59 00 17
Էլ.փոստ @ .

N 03/08.1/5251-11

«22» 06 2011թ.

Հելսինկյան քաղաքացիական
ասամբլեա Վանաձորի
գրասենյակի նախագահ

պարոն Ա.Սաքունցին

Հարգելի պարոն Սաքունց

ՀՀ վարչապետին հասցեագրված Ձեր 2011 թվականի մայիսի 31-ի վարչական բողոքը ՀՀ վարչապետի 2011 թվականի հունիսի 8-ի թիվ 02/23.12/9429-11 հանձնարարականով վերահասցեագրվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը:

Վարչական բողոքում բարձրացված հարցերի կապակցությամբ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից 2011 թվականի ապրիլի 28-ին ստացվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա Վանաձորի գրասենյակի (այսուհետ՝Գրասենյակ) հայտարարությունը (այսուհետ՝ Հայտարարություն) առ այն, որ 2011 թվականի ապրիլի 28-ին առավոտյան ժամը 8^{00}-12^{30} ընկած ժամանակահատվածում Վանաձոր- Երևան երթուղով կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվել: Հայտարարության մեջ առանձ որևէ հիմնավորման նշվել է, որ համաձայն Գրասենյակի տեղական ներկայացուցիչների տեղեկության ուղևորափոխադրումներ դեպի Երևան նշված ժամանակահատվածում չեն իրականացվել նաև Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ և Տաշիր քաղաքներից:

Նույն օրը (28.04.2011թ.) ՀՀ տրանսպորտային տեսչության աշխատակիցների կողմից տեղում կատարվել են վերահսկողական գործողություններ՝ տեղեկությունների հավաստիությունը պարզելու նպատակով:

Վերահսկողության արդյունքում պարզվել է, որ Հայտարարության մեջ նշված երթուղիներից Վանաձոր-Երևան երթուղին 2011 թվականի ապրիլի 28-ին ժամը 07^{00}-09^{30} ընկած ժամանակահատվածում ուղևորահոսկի ծանրաբեռնվածության պատճառով սպասարկվել է չվացուցակի որոշակի խախտումներով՝ օգտագործելով չվացուցակով մինչև ժամը 13^{00} բոլոր չվերթների համար նախատեսված տրանսպորտային միջոցները: Նշված փաստը ՀՀ տրանսպորտային տեսչության աշխատակիցների կողմից արձանագրվել է և ղեկավարվելով <Ավտոմոբիլային տրանսպորտի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով տվյալ երթուղին սպասարկող կազմակերպության ղեկավարին նախազգուշացվել է առկա խախտումները 15-օրա ժամկետում չվերացնելու հետևանքների՝ երթուղու սպասարկման իրավունքից զրկվելու (<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս) մասին:

Նույն օրը ժամը 13^{00}-ից խախտումները վերացվել են և երթուղու սպասարկումը իրականացվել է պատշաճ՝ ըստ հաստատված չվացուցակի:

Նկատի ունենալով վերոշարադրյալը, ինչպես նաև հաշվի առնելով, որ <Ավտոմոբիլային տրանսպորտի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված է երթուղու սպասարկման իրավունքից զրկման կոնկրետ ընթացակարգ, որը ենթադրում է, որ կազմակերպությանը խախտումը հայտնաբերելուց հետո տրվում է ժամկետ խախտումը վերացնելու համար, և խախտումը սահմանված ժամկետում վերացնելու դեպքում երթուղային ցանցը կազմակերպող մարմինը իրավասու չէ կիրառել <Ավտոմոբիլային տրանսպորտի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքները, ուստի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը իրավասու չէ վերոհիշյալ երթուղին սպասարկող կազմակերպության նկատմամբ կիրառել՝ Հայտարարությամբ պահանջվող՝ <Ավտոմոբիլային տրանսպորտի մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքները:

Ինչ վերաբերվում է վարչական բողոքի մեջ նշված այն պնդմանը, որ Վանաձոր-Երևան երթուղին չի սպասարկվել նաև 2011 թվականի մայիսի 31-ին, ապա նշված փաստի առթիվ որևէ բողոք ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը չի ստացել, իսկ

<Հայաստանի Հանրապետության տրասպորտային տեսչության մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերահսկողությունը կազմակերպվում է ընտրանքային կարգով, ինչպես նաև տրանսպորտի մասին օրենսդրության պահանջների խախտմամբ իրականացվող փոխադրումների մասին տեղեկությունների առկայության դեպքերում:

Անհրաժեշտ է նշել , որ Ձեր պնդումը առ այն, որ 2011 թվականի ապրիլի 28-ին առավոտյան ժամը 8^{00}-12^{30} ընկած ժամանակահատվածում Վանաձոր-Երևան երթուղով ուղևորափոխադրումների չիրականացումը փաստացի սահմանափակել է քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքը անհիմն է և որևէ առնչություն չունի անձի հիշատակված սահմանադրական իրավունքի հետ: Յուրաքանչյուր անձ նշված ժամանակահատվածում կարող էր մեկ այլ ավտոտրանսպորտային միջոցով անարգել տեղաշարժվել Հանրապետության ողջ տարածքով:

Նկատի ունենալով վերը նշվածը Գրասենյակի վարչական բողոքում նշված փաստարկները ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության անգործության վերաբերյալ անհիմն են, իսկ Հայտարարության մեջ նշված պահանջի՝ նշված երթուղիների սպասարկման իրավունքից զրկելու վերաբերյալ, իրավական հիմքերը բացակայում են՝ իրավախախտումը նույն օրը վերացվելու պատճառով:

Հարգանքներով՝

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատարող՝ իրավաբանական վարչություն
590026

Հավելված 4.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

✉ ՀՀ, ք. Վանաձոր, Մխիթար Գոշի փող. 3 ☎ 4-49-36, 4-04-66, 2-02-02

N 7/15- 2659 «03» մայիսի 2011թ

«Հելսինկյան քաղաքացիական» ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Արթուր Սաքունցին

Հայտնվում է, որ Ձեր հաղորդումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ ՀՀ քր. դատ. օր-ի 35 հոդ. 1-ին մասի 2-րդ կետով՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Միաժամանակ ուղարկվում է որոշման մեկ օրինակը, որի հետ համաձայն չլինելու դեպքում 7-օրվա ընթացքում կարող եք բողոքարկել Լոռու մարզի դատախազին կամ դատարան:

Առդիր որոշումը «2» թերթից:

Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչ,
ոստիկանության ավագ լեյտենանտ՝ Վ.Մարտիրոսյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին

«03» մայիսի 2011թ. ք.Վանաձոր

Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Վ.Մարտիրոսյանս, ուսումնասիրելով «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի հաղորդումների վերաբերյալ նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը 2011 թվականի փետրվարի 17-ին հաղորդում է հասցեագրել ՀՀ Գլխավոր դատախազություն այն մասին, որ 2011 թվականի փետրվարի 15-ին, ժամը 17-ի սահմաններում, Վանաձոր-Երևան մայրուղու 1-ին կմ հատվածում ճանապարհը դարձել է անանցանելի և 1 ժամ երթևեկությունը դադարեցվել է, իսկ նույն թվականի փետրվարի 17-ին, ժամը 08-ից 11.30-ի սահմաններում նույն ճանապարհահատվածն ամբողջությամբ վերահսկվել է ոստիկանության աշխատակիցների կողմից և վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների վարորդներին արգելելվել է մեկնել քաղաք Երևան:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2011 թվականի փետրվարի 15-ին, ժամը 17-ի սահմաններում «Լոռի ՃՇՇ» ՓԲ ընկերության աշխատակից Արսեն Նալբանդյանն իրեն ամրակցված «ԴԶ-143» մակնիշի ավտոգրեյդերով ըստ սահմանված գրաֆիկի կատարել է ձնամաքրման աշխատանքներ Վանաձոր-Սպիտակ մայրուղում և ժամը 17-ի սահմաններում նույն մայրուղու 1-ին կմ հատվածում խափանվել է հիշյալ ավտոգրեյդերի շարժիչի կցորդի անջատիչի եղանիկի մատիկը, որի արդյունքում ավտոգրեյդերը կայանել է մայրուղու երթևեկելի գոտում, որի պատճառով հնարավորություն չի ունեցել ազատել ճանապարհը և խոչընդոտվել է մայրուղով ավտոմեքենաների երթևեկությունը, ճանապարհը դարձել է անանցանելի և խոչընդոտվել է մայրուղով ավտոմեքենաների երթևեկությունը, այդ թվում վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների վարորդների կողմից բողոքի ակցիա անցկացնողների ավտոմեքենաները: Տեղեկանալով խցանման մասին իրենց ծառայողական պարտականություններն իրականացնող ճանապարհային ոստիկանության 5-րդ վաշտի առաջին դասակի աշխատակիցներն այցելել են հիշյալ վայր, այնուհետև միջոցներ ձեռնարկել ճանապարհը փակվելու խոչընդոտը վերացնելու ուղղությամբ, սակայն կցորդման միջոցով ավտոգրեյդերը ճանապարհից դուրս բերելն անհնար լինելու պատճառով բեռնատար ավտոմեքենաների օգնությամբ ճանապարհ է բացվել ձնածածկ տարածքով: Մեկ ժամ անց՝ ժամը 18-ի սահմաններում, ավտոգրեյդերի վարորդի կողմից այն վերանորոգելուց հետո ճանապարհն ամբողջությամբ ազատվել է և վերականգնվել է երթևեկությունը:

Նախապատրաստված նյութերով պարզվել է նաև, որ 2011 թվականի փետրվարի 17-ին ոստիկանության Վանաձորի բաժնում հետախուզվող անձանց Վանաձոր քաղաքում գտնվելու

մասին ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա ծառայություն է կատարվել Վանաձոր քաղաքից դուրս եկող՝ Վանաձոր-Դիլիջան, Վանաձոր-Ալավերդի, Վանաձոր-Սպիտակ ավտոճանապարհներում, որի ժամանակ կանգեցվել են ավտոմեքենաներ և կատարվել է ստուգումներ, ինչով էլ բացատրվում է ոստիկանության աշխատակիցների ներկայությունը ավտոմեքենաների կուտակման վայրում: Նույն վայրում ծառայություն են կատարել նաև ճանապարհային ոստիկանության 5-րդ վաշտի առաջին դասակի աշխատակիցները, որոնք վարորդներից իմանալով որ Սպիտակ-Երևան մայրուղին անանցանելի է և կատարվում է ձնամաքրման աշխատանքներ, ճանապարհատրանսպորտային պատահարները կանխելու և անվտանգ երթևեկություն ապահովելու նպատակով զգուշացրել են դեպի Երևան գնացող ավտոմեքենաների վարորդներին՝ ճանապարհի անանցանելիության մասին:

Վերոգրյալը հիմնավորվել է Ռազմիկ Մանուչարյանի, Աշոտ Պապյանի, Նորայր Աղասարյանի, Արսեն Նալբանդյանի, Ջամիկ Ամիրբեկյանի, Մարտին Կամենդատյանի, Շաքրո Միսկարյանի, Սմբատ Քառյանի, Անդրանիկ Սահակյանի, Արմեն Պետրոսյանի, Կիրակոս Ղազարյանի բացատրություններով, տրանսպորտային միջոցի, հերթապահության մատյանի զննության, արձանագրություններով, ոստիկանության Վանաձորի բաժնից և «Հայիդրոմեդ» ՊՈԱԿ-ից ստացված գրություններով և նյութերում առկա այլ փաստաթղթերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր.դատ օր-ի 35 հոդ. 1-ին մասի 2-րդ կետով, 180, 181, 185 հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1 «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի հաղորդումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով մերժել քրեական գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության հիմքով

2. Որոշման մեկ օրինակն ուղարկել Արթուր Սաքունցին՝ պարզաբանելով որոշումը բողոքարկելու իրավունքը, կարգը և ժամկետները:

3 Որոշման մեկ օրինակը նյութերի հետ միասին ուղարկել Լոռու մարզի դատախազին՝ մերժման օրինականությունը ստուգելու համար:

Լոռու մարզի քննչական բաժնի ավագ քննիչ,
ոստիկանության ավագ լեյտենանտ՝ Վ.Մարտիրոսյան

Հավելված 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28.
Հեռ (374 10) 59 00 05, Ֆաքս (374 10) 59 00 17
Էլ.փոստ Avetisyan@mtc.am

N 03/07.01/3423-11

«11» 10 2011 թ.

<<Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա Վանաձորի գրասենյակ>> կազմակերպության նախագահ պրն Ա. Սաքունցին

Ձեր 01.10.2011թ
N Ե/2011-01.10/269

Հայտնում ենք, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից նախազգուշացվել են Երևանից դեպի Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան և հակառակ ուղղությամբ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները՝ նշված ուղություններով ուղևորափոխադրումները <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան իրականացնելու համար:

Համաձայն նույն օրենքի 12-րդ հոդվածի նախազգուշացումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, խախտումը չվերացնելու, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կզրկվի երթուղու սպասարկման իրավունքից:

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատ. Տրանսպորտի վարչություն
590105

Հավելված 6

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS` ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2011- 10.10/277
10.10.2011 թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար

Մ. Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող քանի՞ կազմակերպություն է գործում ՀՀ-ում /ըստ մարզերի/
- 2011 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 9-ը դրանցից որո՞նք են ենթարկվել վարչական պատասխանատվության
- ո՞ր նորմի խախտման հիմքով և ի՞նչ չափի:

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել կազմված վարչական ակտերի պատճենները:

Համաձայն ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Արայիկ Զալյան
azalyan@hcav.am

Հավելված 6.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

МИНИСТЕРСТВО ТРАНСПОРТА И СВЯЗИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

MINISTRY OF TRANSPORT AND COMMUNICATION OF THE REPUBLIC OF ARMENIA

DEPUTY MINISTER

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28
28 Nalbandyan Street, Yerevan 0010, Republic of Armenia
Республика Армения, Ереван 0010, ул. Налбандяна 28
Հեռ./Tel.: (37410) 526652, Ֆաքս/Fax: (37410) 560528
Էլ.փոստ/E-mail: mintranscom@mtc.am

N 03/07/2279-11

«24» 10 201/թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ կազմակերպության
նախագահ պրն. **Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ**

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին հասցեագրած Ձեր 10.10-2011թ. թիվ Ե/2011-10.10/277 գրությանը ներկայացնում եմ, ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ցանկը ըստ մարզերի/հավելված 1/:

2011թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում 11 ընկերությունների նկատմամբ կազմվել է թվով 14 վերահսկողական արդյունքների ամփոփման արձանագրություններ, (SS13221, SS13229, SS13244, SS13477, SS13478, SS13479, SS 13480, SS13481, SS13511, SS13512, SS13531, SS13542, SS13576, SS13613) հիմնականում երթուղու ձախողման պատճառով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 137^2 հոդվածով վարչական տույժ է նախատեսված սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով՝միջքաղաքային երթեր ձախողելը ենթակետով:

Կից ներկայացնում եմ վերահսկողական արդյունքների ամփոփման արձանագրությունների պատճենները:

Առդիր՝ 10 թերթ:

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատ՝ Ա. Սողոմոնյան
Հեռ. 59-00-77

Ցանկ

ՀՀ մարզերից դեպի Երևան կանոնավոր ավտոբուսային (միկրոավտոբուսային) միջմարզային երթուղիները սպասարկող կազմակերպությունների

Հ/Հ	Մարզի անվանումը	Սպասարկող կազմակերպություններ(ՍՊԸ կամ ԱՁ)	Երթուղին
1.	Արմավիր	<Էջմիածնի ԲՈՒԱՏ> ՍՊԸ <Շանթ Գյուրջոյան> ՍՊԸ <Գալակտիկա տրանս> ՍՊԸ <Ռամ-Ակա> ՍՊԸ <Արտակ-Քաջիկ եղբայրներ> ՍՊԸ	Վաղարշապատ-Երևան Մերձավան-Երևան Արմավիր-Երևան Մեծամոր-Երևան Արմավիր-Երևան
2.	Արարատ	<Գալակտիկա Տրանս> ՍՊԸ <Լիգա> ՍՊԸ <Էջմիածնի ԲՈՒԱՏ> ՍՊԸ <Վեդու ԲՈՒԱՏ> ՍՊԸ <Գա-լի> ՍՊԸ <Արտաշատի ԲՈՒԱՏ> ՍՊԸ <Համիար> ՍՊԸ <Ան-Ար Ավագյաններ> ՍՊԸ <Արտոնք> ՍՊԸ	Վեդի-Երևան Արտաշատ-Երևան Մասիս-Երևան Վեդի-Երևան Ջրառատ-Երևան Արտաշատ-Երևան Դիտակ-Երևան Սայաթ-Նովա-Երևան Զանգակատուն-Երևան
3.	Կոտայք	<ՆՌԱ-տրանս> ՍՊԸ <Մեգամեկ տրանս> ՍՊԸ <Արագյուղ տրանս> ՍՊԸ <Կինգ դե լյուքս> ՍՊԸ <Տիգրան> ՍՊԸ <Մանեկ> ՍՊԸ <Յուտ-էլ> ՍՊԸ <Սմարտ Սովթ> ՍՊԸ <Ալեքս և Մանվել> ՍՊԸ	Նոր-Հաճն-Երևան Արագյուղ-Երևան Աբովյան-Երևան Աբովյան-Երևան Արզնի-Երևան Գառնի-Գողթ-Երևան Ակունք-Գեղաշեն-Երևան Քաբաքեռավան-Երևան Քասախ-Երևան

		<Լիլ-Լիա> ՍՊԸ <Սուրբ Գեղարդ> ՍՊԸ <Վիլ Լայն> ՍՊԸ	Գեղարդ-Երևան Գառնի-Երևան Հրազդան-Երևան
4.	Գեղարքունիք	<Արսմուշ-Ավտո> ՍՊԸ <Երկու ընկեր> ՍՊԸ <Գավառտրանս> ՍՊԸ <ԱԱԱ տրանսսեվ> ՍՊԸ <Ավտոքայլ> ՍՊԸ <Սիվատրանս> ՍՊԸ	Վարդենիս-Երևան Մարտունի-Երևան Գավառ-Երևան Սևան-Երևան Սևան-Երևան Ճամբարակ-Երևան
5.	Շիրակ	<Տիգրան> ՍՊԸ <Տրանս ակնթարթ> ՍՊԸ <Սամվել-Մեսրոպ> ՍՊԸ <Վար-Ռուբ> ՍՊԸ <Մելիքյան տրանս> ՍՊԸ <Մարալիկ տրանս> ՍՊԸ <Մանթաշի հովիտ> ՍՊԸ	Գյումրի-Երևան Գյումրի-Երևան Արթիկ-Երևան Արթիկ-Երևան Մարալիկ-Երևան Մարալիկ-Երևան Հառիճ-Երևան
6.	Լոռի	<Էլդաս> ՍՊԸ <Գասուռս> ՍՊԸ <Սև կակաչ> ՍՊԸ <Ոսկեթև> ՍՊԸ <Մ.Գ. Հաուզինգ> ՍՊԸ <Անի> ՍՊԸ <Ձորագազ> ՍՊԸ ԱՁ Լաուրա Ալեքսանյան	Վանաձոր-Երևան Վանաձոր-Երևան Սպիտակ-Երևան Վանաձոր-Երևան Տավուշ-Երևան Ստեփանավան-Երևան Ալավերդի-Երևան Ստեփանավան-Երևան
7.	Վայոց Ձոր	<Արսեն Սարգիսով և ընկերներ> ՍՊԸ <Ջերմուկ Գրուպ> ՓԲԸ	Վայք-Երևան Ջերմուկ-Երևան
8.	Սյունիք	<Լավ ընկեր> ՍՊԸ <Մրքաձոր> ՍՊԸ <Բեգմիք> ՍՊԸ	Կապան-Երևան Գորիս-Երևան Սիսիան-Երևան
9.	Արագածոտն	<Թալինի ԱՏՃ> ՓԲԸ	Թալին-Երևան

		<Տարոն-Ռաֆիկ> ՍՊԸ <Բաս-Լիլ> ՍՊԸ <Վի-Առ> ՍՊԸ <Ե.Ռ. Դավթյան և որդիներ> ՍՊԸ <Ռբո-Հակոբ> ՍՊԸ <Հասակ> ՍՊԸ <Աննա և Մարիաննա> ՍՊԸ <Դավթյան տրանս> ՍՊԸ <Գալակտիկա տրանս> ՍՊԸ <Ճարտ տրանս> ՍՊԸ <Խաչատուր և Դմիտրի> ՍՊԸ ԱՁ Սասունիկ Վարդանյան ԱՁ Կարեն Սարգսյան ԱՁ Մարգար Վարդանյան <Սափեյան եղբայրներ> ՍՊԸ	Ապարան-Երևան Ուջան-Երևան Ապարան-Երևան Արալեզ-Երևան Իրինդ-Երևան Վ. Սասնաշեն-Երևան Օշական-Երևան Աշտարակ-Երևան Փարիզի-Երևան Բյուրական-Երևան Կոշ-Երևան Սասունիկ-Երևան Կաթնաղբյուր-Երևան Թալին-Երևան Աշնակ-Երևան
10.	Տավուշ	<Դիլիջանի ԲՈՒԱՏ> ՍՊԸ <Տարոնի Արծիվ> ՍՊԸ <Հարթ ուղի> ՍՊԸ <Սոնա և Միքայել> ՍՊԸ <Մ.Գ. Հաուզինգ> ՍՊԸ Բագրատաշենի մաքսատուն ԱՁ Ռուսլան Բազինյան	Դիլիջան-Երևան Իջևան-Երևան Բագրատաշեն-Երևան Բերդ-Երևան Բերդ-Երևան Նոյեմբերյան-Երևան Գոշ-Երևան.

Հավելված 7

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2011- 28.11/516.1
28.11.2011 թ.

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարար
Մ. Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան

2011 թ. հոկտեմբերի 1-ին կազմակերպության կողմից հայտարարություն է ներկայացվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, պատճենը Լոռու մարզպետին, այն մասին, որ 2011 թ. սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 1-ին Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Տաշիր, Ալավերդի և Ստեփանավան քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումներ չեն իրականացվել:

2011 թ. հոկտեմբերի 11-ին ստացել ենք պատասխան գրություն համաձայն որի «ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից նախազգուշացվել են Երևանից դեպի Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Տաշիր և Ստեփանավան և հակառակ ուղղությամբ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները՝ նշված ուղղություններով ուղևորափոխադրումները «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխան իրականացնելու համար:

Համաձայն նույն օրենքի 12-րդ հոդվածի նախազգուշացումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, խախտումը չվերացնելու, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կզրկվի երթուղու սպասարկման իրավունքից»:

2011 թ. նոյեմբերի 25-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի Ալավերդու, Սպիտակի, Տաշիրի և Ստեփանավանի ներկայացուցիչները ուսումնասիրություն են իրականացրել համապատասխան ավտոկայաններում, որի արդյունքում պարզվել է, որ Ստեփանավան քաղաքից դեպի Երևան ուղևորափոխադրումներ ընդհանրապես օրվա ընթացքում չի իրականացվել: Սպիտակից և Ալավերդուց դեպի Երևան ուղևորափոխադրումներ են իրականացվել միայն առավոտյան իսկ օրվա 2-րդ կեսից ուղևորափոխադրումներ դեպի մայրաքաղաք չեն իրականացվել: Տաշիր քաղաքից թույլատրել են Երևան մեկնել միայն այն անձանց, ովքեր շտապ բժշկական օգնության կարիք են ունեցել, և ինքնաթիռի տոմս:

Վերը նշվածից կարելի գալ այն եզրակացության, որ Լոռու մարզի վերը նշված քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կողմից խախտվել է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «...նախազգուշացումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, խախտումը չվերացնելու, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը զրկվում է երթուղու սպասարկման իրավունքից»:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի դրույթներից առաջարկում եմ, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ, Ալավերդի, Տաշիր և Ստեփանավան քաղաքներից դեպի Երևան կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին զրկել երթուղու սպասարկման իրավունքից՝ նախազգուշացումից հետո խախտումը չվերացնելու և մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու հիմքով:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am

Հավելված 7.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

МИНИСТЕРСТВО ТРАНСПОРТА И СВЯЗИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

MINISTRY OF TRANSPORT AND COMMUNICATION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28.
Республика Армения, Ереван 0010, ул. Налбандяна 28

Հեռ/Тел/ Tel (374 10) 59 00 09, Ֆաքս/Факс/Fax (374 10) 56 05 28
Էլ.փոստ / E-

N 05/17/11245-11

«29» 12 2010 թ.

Հելսինկյան քաղաքացիական
ասամբլեա Վանաձորի
գրասենյակի նախագահ
պրն.Ա. Սաքունցին

Հարգելի պարոն Սաքունց

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին հասցեագրած Ձեր 28.112011թ թիվ Ե/2011-28.11/316 գրության վերաբերյալ հայտնվում է, որ ՀՀ տրանսպորտային տեսչության Լոռու մարզի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից վերահսկողական գործառույթների իրականացման արդյունքում 2011թ.նոյեմբերի 25-ին Ստեփանավանում, Սպիտակ և Ալավերդի քաղաքներից դեպի Երևան ուղևորափոխադրումները ժամը 14-ից հետո ուղևորահոսքի ծանրբեռնվածության պատճառով սպասարկվել է չվացուցակի որոշակի խախտումներով՝ օգտագործելով չվացուցակով մինչև ժամը 14-ը գրեթե բոլոր չվերթների համար նախատեսված տրանսպորտային միջոցները:

Նշված փաստը ՀՀ տրանսպորտային տեսչության աշխատակիցների կողմից արձանագրվել է <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման մասին:

Հաջորդ օրը խախտումները վերացվել են և երթուղու սպասարկումը իրականացվել է պատշաճ՝ ըստ հաստատված չվացուցակի:

Նկատի ունենալով, որ <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված է երթուղու սպասարկման իրավունքից զրկման կոնկրետ ընթացակարգ, որը ենթադրում է, որ կազմակերպությանը խախտումը հայտնաբերելուց հետո տրվում է ժամկետ խախտումը վերացնելու համար: Խախտումը սահմանված ժամկետում վերացնելու դեպքում երթուղային ցանցը կազմակերպող մարմինը իրավասու չէ կիրառել <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքները, ուստի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը իրավասու չէ վերոհիշյալ երթուղին սպասարկող կազմակերպության նկատմամբ կիրառել՝ հայտարարությամբ պահանջվող <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> ՀՀ օրենքի 12- րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքները:

Հարգանքով՝ Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

Կատ.Ա Սողոմոնյան
Հեռ.590077